



29(668)
19.10.2022

Չրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուբին եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ՊԵՏՔ Ե ԲԱՐՉՐԱԶԱՅՆԵԼ ԲՈԼՈՐ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ

Միջազգային գիտաժողով՝ «Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներն ու վտանգները»



Չոկտեմբերի 8-10-ը Արցախում անցկացվեց «Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներն ու վտանգները» խորագրով միջազգային գիտաժողով, որին մասնակցում էին երկու տասնյակից ավելի գիտնականներ Արցախից, ՀՀ-ից, ՌԴ-ից, արտերկրից: Մասնակիցները նախ այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր և ծաղիկներ խոնարհել Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին: Գիտաժողովի աշխատանքների մեկնարկը տրվել է Գանձասարից: Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան-Գանձասար գիտամշակութային կենտրոնում տեղի է ունեցել Ալեքսան Գալստյանի «Ալբանիա-Ավանթ» ռուսալեզու գրքի շնորհանդեսը: Մասնակիցներն այնուհետև հանդիպում են ունեցել և զորամասի զինվորների հետ:

2

ԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՆ ԱՐԹՈՒՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՈՂԶՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ



Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչության կենտրոնի ղեկավար Հայր Գարեգին Համբարձումյան Գիտաժողովի կազմակերպիչ հարգելի համանախագահներ, անդամներ, մասնակիցներ, ներկաներ Թույլ տվեք նախ հատուկ շնորհակալություն հայտնել Թիմուր Այտիբեդովին և Վլադիմիր Բետուլովին այս սրբազան հողում գտնվելու համար:

Ողջունում ենք բոլորիդ Արցախի Հանրապետության Ազգային ժողովում և կարևորում «Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներն ու վտանգները» խորագրով միջազգային գիտաժողովի նախաձեռնումն ու կազմակերպումը: Հարգելի ներկաներ Այսօր Արցախը կանգնած է ոչ միայն մշակութային ժառանգության ոչնչացման վտանգների, այլև գոյաբանական սպառնալիքների առջև:

Բացահայտ ճշմարտություն է, որ Ադրբեջանն իր ձևավորումից ի վեր (1918թ.) վարել է հակահայ պետական քաղաքականություն, որի հիմքում եղել է շարունակում է մնալ հայ ինքնության և մշակութային արժեքների ոչնչացումը: Դեռևս 1920-ական թվականներից առկա են Ադրբեջանի կողմից հայկական մշակութային և հոգևոր ժառանգությանը միտումնավոր և չքողարկված կերպով անդառնալի վնաս հասցնելու, դրա հիմնահատակ ոչնչացման և յուրացման փաստագրված դեպքեր, որոնք նախադեպ են հանդիսացել 2020 թվականի աշնանային պատերազմի ընթացքում և դրան հաջորդող ամիսներին Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական մշակութային և հոգևոր ժառանգություն հանդիսացող պատմական հուշարձանների, արվեստի ստեղծագործությունների և պաշտամունքի վայրերի, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի ու Արցախյան 1-ին պատերազմի զոհվածների հուշահամալիրների նկատմամբ նոր ուժգնությամբ վայրագությունների:

Դատապարտելի են նաև Ադրբեջանի կողմից հայկական Առաքելական եկեղեցիների ալբանականացման հեռահար նպատակով դրանք վերանորոգելու, հայալեզու արժանագրությունները վերացնելու մասին պետական ամենաբարձր մակարդակով արված հատարությունները: Այնուհայտ է, որ Ադրբեջանի ագրեսիվ արշավի նպատակը հայկական պատմական հիշողության և մշակութային ներուժի ոչնչացումը և հայկական մշակութային ու հոգևոր ժառանգության յուրացումն է:

Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունները բազմիցս ահազանգել են Ադրբեջանի կողմից հայկական հոգևոր և նյութական ժառանգության համակարգված և դիտավորյալ ոչնչացման դեպքերի, հայկական հոգևոր և մշակութային ժառանգության յուրացման մասին: Համոզված ենք, որ այս ահազանգերի արդյունքում միջազգային հանրությունը և միջազգային կառույցները բավարար չափով տեղեկացված են կատարվածի մասին: Դեռևս 2020թ. արյունոտ աշնան ընթացքում Ադրբեջանի կողմից մասնագիտացված կառույցների ներգրավման կարևորության մասին հայտարարությունները: Այս համատեքստում մեծապես կարևորում ենք եւս ՀՀ Միևնակի խմբի համամիտաբանող երկրների՝ ՌԴ-ի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի մտահոգություններն Արցախում հայկական մշակութային և հոգևոր ժառանգության հետագա ճակատագրի շուրջ, գործնական աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը և միջազգային մասնագիտացված կառույցների ներգրավման կարևորության մասին հայտարարությունները: Կարևորում ենք հատկապես ՌԴ-ի կողմից այս հարցի նկատմամբ ընդգծված վերաբերմունքն ու իրականացված գործնական քայլերը:

Մեծապես գնահատում ենք հունամիտար այս խնդրի լուծման շուրջ համընդհանուր պատասխանատվությունը կիսելու՝ ամենաբարձր մակարդակով արված հայտարարությունները: Վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը՝ աջակցելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստաթղթի առաքելության հնարավորինս արագ իրականացմանն Արցախում և հարակից շրջաններում: Արցախի հարուստ մշակութային և հոգևոր ժառանգությունը համաշխարհային մշակութային և հոգևոր ժառանգության անբաժան մասն է կազմում: Հետևապես, Ադրբեջանի կողմից մշակութային և հոգևոր ժառանգության հանցագործությանն ունեցված վնասները մարտահրավեր է ողջ քաղաքակիրթ մարդկությանը: Միջազգային հանրության՝ Արցախում հայկական մշակութային և հոգևոր ժառանգության պաշտպանությանն ունեցված վնասները հրստահարում ենք որպես մշակութային և հոգևոր ժառանգությանն ունեցված վնասները: Արցախի օկուպացված տարածքներում վտանգված հայկական հոգևոր և մշակութային ժառանգության հետագա ոչնչացման կանխման միակ մեխանիզմը: Այնպիսով ենք միջազգային իրավունքի համապատասխան իրավական նորմերի շրջանակներում կանխման գործողություններ: Կոչ ենք անում անհապաղ, գործունե և շարունակական քայլեր ձեռնարկել արդյունավետ մեխանիզմների մշակման հարցում՝ նպաստելու Ադրբեջանի կողմից այլ ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ ստանձնած միջազգային իրավական պարտավորությունների կատարմանը: Հակամարտության կարգավորումը, տարածաշրջանում տևական և կայուն խաղաղությունն անհնար են առանց Ադրբեջանի կողմից օկուպացված և փաստացի Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական մշակութային և հոգևոր ժառանգության պահպանության, այդ թվում՝ բոլոր հնարավոր միջոցներով մշտադիտարկման կազմակերպման՝ կանխելու համար հայրերի էթնիկ գտնման նպատակով իրականացրած գործողությունները: Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ Այսօր իր սրբազան հողում՝ մեր ժողովուրդն աշխարհին ապացուցում է, որ Արցախը կա, ապրում է՝ պայքարելով իր երկրում ապրելու, ինչպես նաև մշակութային ժառանգության պահպանման ու պաշտպանության իրավունքների համար: Կրկին ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ մաղթում ենք արդյունավետ ու բեղուն աշխատանք: Շնորհակալություն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻ ԽՈՒՄՔ ՆԵՐՎԱՅԱՆՈՒՅԻՉՆԵՐ

Ուսուցչի օրվա առթիվ ԱՀ նախագահի հրամանագրով պետական պարգևներ և պատվավոր կոչումներ են շնորհվել կրթության և գիտության ոլորտի մի խումբ գործիչների:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում ունեցած նշանակալի վաստակի համար **ԱՀ վաստակավոր մանկավարժի** կոչման են արժանացել՝

Եմնա Հովհաննեսի Ինանցը - Ստեփանակերտի հ.7 հիմնական դպրոցի դասվար,

Ալվինա Աշոտի Ասրյանը - Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի դասվար, **Էլմիրա Արտավազդի Հայրապետյանը** - Ստեփանակերտի հ.10 հիմնական դպրոցի դասվար,

Ռիտա Ալեքսանդրի Արզումանյանը - Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի (թոշակառու),

Նորա Միքայելի Թամրազյանը - Ստեփանակերտի Թամարա Քամայանի անվան բժշկական քոլեջի տնօրեն,

Անժելա Լևոնի Գաբրիելյանը - Ստեփանակերտի հ.10 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի (թոշակառու),

Էլեոնորա Միքայելի Բաբայանը - Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի (թոշակառու),

Նինա Նիկոլայի Բաղունցը - Մարտակերտի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի,

Ռուբեն Ալեքսանդրի Օսիպովը - ԱՀ ԿԳՄՍՆ պետական տեսուչ,

ԱՀ «Ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող» կոչում է շնորհվել Ասկերանի շրջանի Խաչենի միջնակարգ դպրոցի ֆիզիկուլտուրայի ուսուցչի **Գրիշա Սուրենի Ղազարյանին**:

Գիտության և կրթության բնագավառում ունեցած նշանակալի վաստակի համար ԱՀ բնապահպանության կոմիտեի նախագահի տեղակալ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վահրամ Տորիկի Հայրապետյանին** շնորհվել է ԱՀ «Գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչում:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում ներդրած ավանդի համար «**Վաչագան Բարեպաշտ**» մեդալով պարգևատրվել են.

Գայանե Ալեքսանդրի Գրիգորյանը - ԱՀ ԿԳՄՍՆ պետական տեսուչ, **Վերա Կիմի Հայրիյանը** - ԱՀ ԿԳՄՍՆ պետական տեսուչ (թոշակառու),

Մայիլա Սուլեյմանի Ալավերդյանը - Ստեփանակերտի հ.10 հիմնական դպրոցի դասվար,

Մելիդա Սուրենի Քարոյանը - Մարտակերտի հ.2 հիմնական դպրոցի տնօրեն:

ԱՀ «Երախտագիտություն» մեդալով պարգևատրվել են.

Ծովինար Ռաֆիկի Առստամյանը - Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի,

Քրիստինա Նորայրի Իսրայելյանը - ԱՀ ԿԳՄՍՆ պետական տեսուչ, **Գառնիկ Ռաֆիկի Իսրայելյանը** - Մարտակերտի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ,

2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՎԻՆ

ՊԵՏՔ Ե ԲԱՐՁՐԱԶԱՅՆԵԼ ԲՈՒՈՐ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ



Գիտաժողովի հանդիսավոր բացումը և լիազուցված միստր ԱՅ Ազգային ժողովի միստերի դահլիճում էր: Գիտաժողովը համակարգող՝ ԱՅ նախագահի խորհրդական Լուսինե Ղարախանյանը բացման իր խոսքում ասաց, որ «Արցախի հոգևոր ու մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրներն ու վտանգները» թեման այլևս Արցախի քաղաքական օրակարգում է և ինքնապես գնում է Արցախ-ադրբեջանական հակամարտությանը զուգահեռ: Ադրբեջանը շարունակում է զեղծարարություններով մոդելավորել սեփական ինքնությունը, տորոել իր վերահսկողության տակ անցած շուրջ 2000 հայկական հուշարձանները, վտանգի տակ պահել հայկական հոգևոր ու մշակութային արժեքները: Իսկ ի՞նչ ենք անում մենք, ինչպե՞ս ենք օգտագործում այդ փաստերը որպես պաշտպանական ռեսուրս. այս հարցերը շոշափվեցին գիտաժողովի ընթացքում: Գիտաժողովի զլխավոր նախածնողը

կայացման գործում, այսօր էլ հանդես է գալիս հայկական ինքնության, հայ ազգային ու հոգևոր արժեքների պահպանման առաքելությամբ: Արժեքներ, որ հայ ժողովուրդը ստեղծել է իր բազմադարյան գոյության ընթացքում, և որոնք քաղաքակիրթ աշխարհում լայն ճանաչում ու զնահատական են ստացել:

Լիազուցված միստր վարդ Ա. Ղարախանյանի վկայակցմամբ՝ հայկական հոգևոր և մշակութային ժառանգության պահպանության գործում մեծ աշխատանք է տանում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Զ-րդը: 44-օրյա պատերազմի օրերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նրա ջանքերով



ստեղծվել է Արցախի պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերով գրասենյակ, և ամենահեղինակավոր միջազգային կառույցներին Չայրապետը հղել է գրություններ, որոնց բոլոր պատասխանների մեջ Արցախի պատմամշակութային ժառանգությունը ճանաչվում է որպես հայկական:

Աներևույթ և աներևույթ այդ պայքարի մասին խոսելով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչության կենտրոնի ղեկավար հայր Գարեգին Զամբարձունյանը կարծում է, որ ջանք ու եռանդ չպետք է խնայել Արցախի հոգևոր և մշակութային ժառանգության պահպանության և նրա վտանգված լինելու խնդրի մասին բարձրաձայնելու հարցում:

ԱՅ ԿԳՄՍՍ-ի անունից ողջույնի խոսք ասաց նախարարի տեղակալ Լեռնիկ Յովհաննիսյանը, որի համոզմամբ՝ մեր ակադեմիական շրջանակների խոսքը կա-

րպես Վլադիմիր Բետուլով մասնակցում էին գիտաժողովին:

Կովկասագետ, արևելյան լեզուների գիտնակ Թ. Այտիբերովը զեկուցում ունեցավ «Ղարաբաղը ավարական աղբյուրներում 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին» թեմայով: Նա նշեց, որ կապը ավարների ու ղարաբաղցիների միջև 9-րդ դարից է, և ավարները լավ տեղյակ են Չարավային Կովկասի պատմությանը ու դրսից տեղեկանալու կարիք չունեն. «Բաքվում երևան է եկել տարօրինակ «գիտություն», որի նպատակն է ապացուցել, որ հայերը չեն ապրել այս տարածաշրջանում և անգամ՝ Արցախում: Դրանում նրանք հիմնվում են հեքիաթների վրա: Մեր արժանահավատ վկաները հերքում են այդ, այսպես կոչված, գիտնականներին»:

Իսկ Վ. Բետուլովը իր ելույթում մասնավորապես ասաց. «Ուրախ եմ ինձ ընձեռված հնարավորության համար՝ մասնակցելու բարձր մակարդակով կազմակերպված գիտաժողովին: Ինձ խիստ հոգեհարազատ է քրիստոնեական մշակույթի այս երկրում միջոցառմանը մասնակցելու գաղափարը»: Գիտաժողովի մասնախմբային միստում Վ. Բետուլովը հանդես եկավ «Արցախի ճարտարապետագեղարվեստական ժառանգությունը ակներև ու ամբողջական պատմական աղբյուր, որոշիչ և ցուցիչ է տարածքի էթնիկ պատկանելությունը հայ ժողովրդին» թեմայով:

Ճանաչված հայագետ (Բեռլինի ազատ համալսարանի հարավարևելյան եվրոպական հետազոտությունների ինստիտուտ), դոկտոր Թեա Յոհաննիսյանը՝ «Արցախի նյութական, մշակութային արժեքների պաշտպանությունը» թեմայով ելույթը ավելց առցանց:

Մյուս զեկուցողները՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յանկետ Պետրոսյանը, թեկնածուներ Չայրուհի Մուրադյանը, Մելանյա Բալայանը, ինչպես նաև լիազուցված միստից հետո երեք մասնախմբերում կայացած քննարկումներում ելույթ ունեցողները, այդ թվում՝ առցանց, ամերիկացի արձան այն վայրագություններին, որոնք Ադրբեջանը, մասնավորապես վերջին պատերազմի և նրան հաջորդած այս երկու տարիների ընթացքում իրականացնում է Արցախի եկեղեցիների, խաչքարերի, մշակութային այլ հուշարձանների նկատմամբ: Հնչեցին մտքեր այն մասին, որ Ադրբեջանը չի կարող ամբողջովին ոչնչացնել Արցախի ամենահայտնի հուշարձանները՝ զգուշանալով համաշխարհային հանրության արձագանքներից: Բայց եթե այդ հուշարձանների նկատմամբ Բաքվի ռեժիմը սահմանափակվում է դրանց ինքնության կեղծման փորձերով, մասնավորապես՝ աղվանականացնելով, ապա օկուպացված տարածքներում քիչ հայտնի հուշարձանները անխնայ ոչնչացնում է՝ վերացնելու հայկական պատմական հետքերը:

Արցախի մշակութային ժառանգության մեջ խտացված է հազարամյակների պատմություն ունեցող մեր ազգի ոգին: Գիտաժողովի մասնակիցներն այն եզրահանգմանը եկան, որ ինչքան ժամանակ մենք կանք, պետք է խոսենք այդ ժառանգության մասին, պետք է բարձրաձայնեց բոլոր ատյաններում. գիտնականներն իրենց գործունեությամբ պետք է ճշմարտությունը վեր հանեն, քաղաքական գործիչներն այդ ուղղությամբ իրենց գործն անեն, հոգևորականները՝ իրենց առաքելությունը՝ ազգային տարբեր կառույցների հետ ջանքերը մեկտեղելով, խնդրի մասին բարձրաձայնելով, որպեսզի հնարավոր լինի փրկել Արցախի հայկական հոգևոր և մշակութային ժառանգությունը անխնայ ոչնչացումից:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀԱԵ Արցախի թեմը, Արցախի գիտական կենտրոնը:

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ



ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ՝ եպիսկոպոս Վրթանես Աբրահամյանն է, որը, ելույթ ունենալով, ասաց, որ հայ ազգը միշտ եղել է մշակող ու կերտող, ստեղծագործող և իր շրջապատը զեղեցկացնող տեսակի կրող, հակառակ այն հանգամանքին, որ բազմիցս առնչվել է շարունակում է առնչվել այնպիսի ժողովուրդների ու ցեղախմբերի հետ, որոնք հակված են կառուցելու փոխարեն քանդել, օրհնելու փոխարեն անիծել: Ահա այդպիսի մշակութակործան վարքագիծ է որդեգրել մեր հակառակորդը պետական ամենաբարձր մակարդակով: «Մենք օրհնում ենք և օծում, իսկ նրանք պղծում են ու դրանով ուրախանում: Տպավորությունն այն է, որ նրանք վախենում են նույնիսկ մեր մշակութային կոթողներից, եկեղեցիներից: Երբ անհատը կամ ժողովուրդը մշակութապես սնանկ է կամ որևէ մեծարժեք բան չի կարողանում ստեղծել, սկսում է նախանձել ուրիշներից, վախենալ նրա արժեքներից ու ոչնչացնում է դրանք: Մեր թշնամու մոտ դա վերաճել է խրոնիկ հիվանդության», - նկատեց թեմակալ առաջնորդը՝ հավելելով, որ մեր պայքարը բարու և ճշմարիտի համար է: Իսկ այդ պայքարում հաղթելու է նա, ով բարի է ու ճշմարիտ. «Այսօր մենք պետք է նախ հաղթենք ինքներս մեզ, մեր ներսի չարին, հետո մնացած հաղթանակները շատ արագորեն կհաջորդեն իրար»:

ՀԱԵ-ն բոլոր ժամանակներում իր ուրույն և կարևոր դերն է ունեցել հայկական հոգևոր և մշակութային ժառանգության՝ որպես հայ ժողովրդի գոյապայքարի, գոյատևման կարևորագույն բաղադրիչներից մեկի պահպանման գործում: Եկեղեցին, որ բացառիկ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմական ընթացքի և պետականության



րող է ազդեցություն ունենալ միջազգային կազմակերպությունների վրա, որպեսզի կարողանանք պաշտպանել մեր հոգևոր և մշակութային ժառանգությունը:

Մշակութային համաշխարհային հանրություն քիչ չեն այն մարդիկ, ովքեր հայ-



կական հոգևոր ու մշակութային ժառանգությունը պահպանելու հարցերը լուծելու գործում կանգնած են մեր կողքին: Նրանցից Դադստանի պետական համալսարանի դասախոս, պրոֆեսոր, ՌԴ ԳԱԱ ավագ գիտաշխատող Թիմուր Այտիբերովը և ՌԴ ԳԱԱ թղթակից անդամ, ՌԴ պատվավոր ճարտա-

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՆԵՐՎԱՅԱՆՈՒՅԻՉՆԵՐ

- 1 Ալինա Աշոտի Արզումանյանը - Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի,
- Ծովինար Վերդիի Արզումանյանը - Ասկերանի շրջանի Պատարայի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի,
- Անուշ Վլադիմիրի Ավանեսյանը - Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի,
- Ստելլա Մամուչարի Գասպարյանը - Մարտունու հ.2 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի:

ԱՅ ԿԳՄՍ նախարարության կողմից պատվոգրերի ու դրամական պարգևների են արժանացել:

- «Տարվա լավագույն դպրոց» մրցույթի արդյունքներով՝ «Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում հաղթող ճանաչված **Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցը**.

- «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի արդյունքներով՝ «Աշակերտների մեջ առարկայի նկատմամբ հետաքրքրություններ գաղապանելու կարողությունը» անվանակարգում հաղթող ճանաչված Ասկերանի շրջանի Պատարայի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ **Խաչիկ Ռուդիկի Սարգսյանը**,

- «Առարկայի իմացության մակարդակը» անվանակարգում հաղթող ճանաչված՝ Մարտակերտի շրջանի Չլդրանի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ **Ժիրայր Սաշայի Գրիգորյանը**,

- «Սովորողների անհատական առանձնահատկությունների հաշվի առնելը» անվանակարգում հաղթող է ճանաչվել Մարտունու հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի դասվար **Սուսաննա Միքայելի Սարգսյանը**,

- «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքներով հաղթող է ճանաչվել «Ստեփանակերտի հ.2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի դաստիարակ **Անահիտ Հակոբի Ավագյանը**:

- «Միտոս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Մարտունու հ.2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի դաստիարակ **Իրինա Վիլյամի Ստեփանյանը**:

- «Երեխաների հետ վարվեցողությունը» անվանակարգում հաղթող է ճանաչվել «Հաթերքի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի դաստիարակ **Գայանե Բորիսի Իսկանդարյանը**:

- «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթի արդյունքներով՝ «Առարկայի գերազանց իմացության և ՆԶՊ առարկայից օլիմպիական թիմին լավագույնս նախապատրաստելու համար» անվանակարգում հաղթող է ճանաչվել Ստեփանակերտի հ.9 միջնակարգ դպրոցի զինղեկ **Արսեն Հենրիկի Հարությունյանը**,

- «Աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած ձեռքբերումների համար» անվանակարգում հաղթող է ճանաչվել Մարտունու շրջանի Նորչենի միջնակարգ դպրոցի զինղեկ **Պարույր Սուրենի Հակոբյանը**,

- «Սաների մեջ առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար» անվանակարգում հաղթող է ճանաչվել Ասկերանի շրջանի Խնածախի միջնակարգ դպրոցի զինղեկ **Անդրանիկ Էդուարդի Զաքարյանը**: Շնորհավորում ենք:

ՎԱՍՏԱԿ ԵՎ ՊԱՏԻՎ

ՍԵՐ ԵՎ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ. ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԻՄՔՈՒՄ

Մատաղ սերնդի պատշաճ կրթությունն ու դաստիարակությունը ռազմավարական նշանակություն ունի երկրի համար, առավել եւս՝ բարդ եւ անորոշ ժամանակներ ապրող մեր երկրի: Ժամանակի մարտահրավերներին արժանի պատասխան տալու ծանր բեռն առաջին հերթին ընկնում է մանկապարտեզի դաստիարակների ուսերին: Դաստիարակի աշխատանքի թեմայի շուրջ խոսեցինք «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի դաստիարակ, հաճելի գրուցակից եւ հրաշալի անձնավորություն, տարվա լավագույն դաստիարակ Անահիտ ԱՎԱԳՅԱՆԻ հետ:

Ծնվել է 1972թ. փետրվարի 23-ին Ստեփանակերտում: 1979-1989թթ. սովորել է Ավ. Իսահակյանի անվան հ. 10 միջնակարգ դպրոցում: 1987-1989թթ. սովորել է Ստեփանակերտի ուսումնաարտադրական կոմբինատում եւ յուրացրել դերձակի արհեստը: 1993թ. ամուսնացել է, ունի երկու դուստր: 2001թ. մտել է աշխատանքի մեջ:



տանքի Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզում (դեռեւս ոչ պետական) եւ աշխատել որպես դաստիարակ: Այնուհետեւ ընդունվել եւ հեռակա սովորել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա» բաժնում, ստացել ուսուցիչ-մանկավարժի մասնագիտություն: Առաջօր աշխատում է Ստեփանակերտի հ. 2 պետական մանկապարտեզում՝ որպես կրտսեր առաջին խմբի դաստիարակ: 2019թ. Ուսուցչի օրվա կապակցությամբ պարգևատրվել է պատվոգրով՝ մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում ներդրած ավանդի եւ արձանագրած հաջողությունների համար: 2022թ. ապրիլին Ստեփանակերտի քաղաքապետի կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլում հաղթող ճանաչվելու համար: 2022թ. հոկտեմբերին ԱՅ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչվելու համար:

- **Տիկին Անահիտ, ինչպե՞ս հասկացաք, որ երեխա դաստիարակելը Ձեր տարերքն է:**

- Սկզբնական շրջանում, երբ դեռ չէի կողմնորոշվել, թե ինչ աշխատանք կարող եմ կատարել, ճիշտն ասած, չէի մտածում մանկավարժության մասին: Ամուսնուս հետ խորհրդակցել էինք եւ որոշել, որ պետք է հարմար աշխատանք ունենան, որպեսզի կարողանայինք միասին պատշաճ հոգավ մեր ընտանիքի հոգսերը: Երեխաներն արդեն շատ փոքր չէին, մտածում էի որ եւ աշխատանք գտնել եւ զբաղվել: Լսելով այդ մասին՝ Լարիսա Ներսիսյանը, որը տնօրինում էր մանկապարտեզը, առաջարկեց աշխատանքի անցնել մանկապարտեզում որպես դաստիարակ: Ես ընդունեցի առաջարկը ու սկսեցի աշխատել: Ինձ դուր եկավ երեխաների հետ շփվելը, ընկղմվեցի նրանց աշխարհը եւ շատ սիրեցի իմ աշխատանքը: Ինքնընտանեկան զանազան խաղերի միջոցով երեխաների հետ հաղորդակցվելու դառնում էր անմիջական, անկաշկանդ ու ազատ: Երեխաների մոտ նկատում էի ընդունակություններ եւ

հնարավորություններ, որոնց բացահայտումը, վերհանումը եւ զարգացմանը նպաստելն ինձ դուր էր գալիս: Որոշ ժամանակ անց տիկին Ներսիսյանը զրույց ունեցավ ինձ հետ: Կարելի է ասել, որ այդ զրույցը ճակատագրական նշանակություն ունեցավ ինձ համար: Նա ասաց, որ ինձ մոտ բնատուր տաղանդ է նկատում, տեսնում է իմ հոգու լույսը, որը պետք է զարգացնել ու կատարելագործել: Նա էլ դրդել է ինձ ստանալ մանկավարժի մասնագիտություն, Աստուծոց տրված շնորհքը կատարելագործելիս աջակցել է դժվար պահերին՝ այդպիսով նպաստելով իմ հետագա հաջողություններին: Նրա խորհրդով ու շնորհիվ ես հասա այն ամենին, ինչին որ հասել եմ: Ինչքան հմտանում էի ու փորձ ձեռք բերում, այնքան հասկանում էի, որ մանկավարժությունն իմ տարերքն է:

- **Ի՞նչն է ամենահաճելին դաստիարակի աշխատանքի մեջ:**

- Հաճելին հենց աշխատելն է երեխաների հետ եւ իհարկե, այդ աշխատանքից ստացվող արդյունքը: Փոքրիկների հետ աշխատելը շատ էներգիա է պահանջում, բայց միևնույն ժամանակ հենց նրանք են լիցքավորում մեզ: Հիրավի, չկա ավելի մեծ երջանկություն, քան տեսնել քո շրջապատում ուրախությունից փայլող անմեղ աչքեր, անբիծ ու զուլալ մի աշխարհ, որտեղ իշխում են միայն բարին, անաղարտն ու լուսավորը: Ուրախանում եմ յուրաքանչյուր երեխայի առաջընթացով, ինչպես որ սեփական երեխաներին, հաճույք եմ ստանում, երբ նկատելի են հաջողությունները: Հաճախ նրանց մոտ ես նկատում եմ ավելին, քան կարող եմ տեսնել իրենց ծնողները: Երբեմն նրանց մի հայացքն անգամ այնքան շատ բան է ասում. չէ՞ որ նրանք դեռ չեն կարողանում ազատ արտահայտվել խոսքերով: Երբ նոր եմ ոտք դնում մանկապարտեզ, շատ երեխաներ լաց են լինում: Ես հասկանում եմ, որ նրանց համար դեռ դժվար է, հասկանում եմ, թե նրանք ինչից են կորվել եւ ինչու են լացում: Բայց ես վստահ եմ լինում, որ շուտով կընդունենք իրար: Աստիճանաբար ընտելանալով՝ փոխվում է երեխաների վարքը: Սկսում են հասկանալ, զգալ, երբ ասում եմ, որ հավաքեն խաղալիքները, նկատում եմ, որ սկսեցին հավաքել, երբ սկսում են ուտել իմ ձեռքից, հասկանում եմ, որ ինձ ընդունել են: Մեծ ուրախություն եմ ապրում, երբ չուտող երեխան սկսում է ուտել, կաշկանդված երեխան դառնում է ինքնավստահ, այդպիսով հաճույք եմ ստանում եւ դրական խղճեր, երբ կարողանում եմ դուրս բերել երեխային այդպիսի վիճակներից: Հաճելի է, որ ծնողները հավատում են ինձ ու այդքան փոքր երեխաների դաստիարակությունն են ինձ վստահում, համոզված լինելով, որ երեխան ապահով է ու գիտելիք ստացած: Դա պատիվ է ինձ համար եւ մեծ հաճույք:

- **Ի՞նչ անձնային եւ մասնագիտական որակներն ու հատկություններն են մանկապարտեզի դաստիարակին դարձնում լավագույն:**

- Բարությունը, ջերմությունը, արդարությունը, իմաստունությունը այն հատկություններն են, որոնցով առանձնանում են լավ դաստիարակները: Դաստիարակները հոգեբաններ չեն, բայց պարտավոր են տիրապետել անձնային հոգեբանության գիտելիքներին, կարողանալ երեխայի հետ հաղորդակցվելը ճիշտ կազմակերպել: Պետք է կարողանալ երեխային ընդունել որպես անձ, ընդունել նրան այնպիսին, ինչպիսին որ կա, հարգել նրան, մանկանալ, ընկղմվել նրա աշխարհը, խաղալ հետը, հասկանալ նրան, հնարավորինս լավ տեսնել նրա մեջ, իսկ վատը չտեսնել: Մեր առջեւ ծառայած բարդ խնդիրներին լուծում տալու համար առաջին հերթին ինքներս պետք է կարողանանք իրար համար օգտակար ու լավատես լինել: Խոսքը վերաբերում է ոչ միայն դաստիարակ-սան հարաբերությանը, այլեւ ընդհանուր կոլեկտիվին: Յուրաքանչյուր մարդ կարող է փոխել իրեն դեպի լավը, կատարելագործվել, եթե ցանկություն ունենա, Աստուծու պետք է մոտիկ լինել եւ շնորհակալ լինել ընձեռնված ամեն մի հնարավորության համար:

- **Դաստիարակի աշխատանքում ի՞նչ դժվարություններ եք հանդիպում:**

- Ցանկացած աշխատանքը հեշտ կատարելու համար բավական է սիրել այն: Սիրով եւ եռանդով կատարվող գործում հաղթահարվում են բոլոր դժվարությունները: Ժամանակները փոխվում են, մարտահրավերները դառնում են ավելի արդիական, որոնց լուծում տալու համար պետք է կատարելագործվել, չմնալ նույն դիրքորոշման մեջ, այլ առաջ շարժվել ժամանակի հետ: Դժվարություններ իմ աշխատանքում անշուշտ կլինեն, եթե անընդհատ չաշխատեի ինքս ինձ վրա: Երբ երեխայան տուն եմ վերադառնում աշխատանքից, որոշ ժամանակ հատկացնում եմ ինքնավերլուծությանս, ամփոփում եմ օրվա աշխատանքս, մտածում եմ, թե որ երեխա ինչ ստացավ այսօր, եւ ում հետ ինչ անելիքներ ունեմ վաղը: Լինում են պահեր, երբ հոգնում եմ, բայց երբեք չեմ դժվարացել կամ թերացել իմ աշխատանքում հոգանալու:

թյան պատճառով: Ինչպես որ ընտանիքի մայրը չի դադարում իր ջերմությունը փոխանցել զավակներին անգամ հոգնած պահերին, այնպես էլ դաստիարակը ձգտում է իր բոլոր սաներին մոր պես ջերմություն հաղորդել միշտ: Սաները շատ են, բայց դա ոչ թե դժվարացնում կամ հուսահատեցնում, այլ հուսադրում է: Ստիպված ենք լինում քննեցնել երկու հոգով, բայց այդպիսի պայմաններում է թույլն ուժեղանում, ձեւավորվում միմյանց հանդեպ հանդուրժողականություն, բարություն: Դաստիարակը պետք է լինի շատ ուշադիր եւ օգնի յուրաքանչ-



յուր երեխայի ստանալ այն, ինչի կարիքը նա ունի: Երեխաների մեծ քանակը գուցե եւ ստանդարտներից դուրս է, բայց ես ողջունում եմ, որ ծնողները դա իմանալով, այնուամենայնիվ, իրենց երեխաներին բերում են մանկապարտեզ, ուրախ են, որ այդքան շատ մարդ կա Արցախում, հայ մարդ, ովքեր չեն պարտվում, իսկ մեք պետք է ուժեղ լինենք, դաստիարակենք, կրթենք, զարգացնենք եւ այդպիսի փոքր հաղթանակներով հասնենք ազգային մեծ հաղթանակի:

- **Ի՞նչ անձնային եւ մասնագիտական որակներն ու հատկություններն են մանկապարտեզի դաստիարակին դարձնում լավագույն:**

- Բարությունը, ջերմությունը, արդարությունը, իմաստունությունը այն հատկություններն են, որոնցով առանձնանում են լավ դաստիարակները: Դաստիարակները հոգեբաններ չեն, բայց պարտավոր են տիրապետել անձնային հոգեբանության գիտելիքներին, կարողանալ երեխայի հետ հաղորդակցվելը ճիշտ կազմակերպել: Պետք է կարողանալ երեխային ընդունել որպես անձ, ընդունել նրան այնպիսին, ինչպիսին որ կա, հարգել նրան, մանկանալ, ընկղմվել նրա աշխարհը, խաղալ հետը, հասկանալ նրան, հնարավորինս լավ տեսնել նրա մեջ, իսկ վատը չտեսնել: Մեր առջեւ ծառայած բարդ խնդիրներին լուծում տալու համար առաջին հերթին ինքներս պետք է կարողանանք իրար համար օգտակար ու լավատես լինել: Խոսքը վերաբերում է ոչ միայն դաստիարակ-սան հարաբերությանը, այլեւ ընդհանուր կոլեկտիվին: Յուրաքանչյուր մարդ կարող է փոխել իրեն դեպի լավը, կատարելագործվել, եթե ցանկություն ունենա, Աստուծու պետք է մոտիկ լինել եւ շնորհակալ լինել ընձեռնված ամեն մի հնարավորության համար:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել այն մարդկանց, ովքեր գնահատել են իմ աշխատանքը, եղել են իմ կողքին, հավատացել իմ ուժերին եւ ուրախացել իմ հաջողությանը: Ցանկանում եմ, որ մեր մանկապարտեզը՝ տնօրեն Ռեմա Բարխուդարյանի գլխավորությամբ, միշտ լինի բարձունքում լավ մասնագետներ ունենանալու շնորհիվ: Ցանկանում եմ, որ ոչ միայն իմ, այլեւ բոլոր դաստիարակների աշխատանքի գնահատումը կի շարունակական բնույթ, ինչն էլ լավագույն մոտիվացիա է մասնագիտական ոլորտում առաջ շարժվելու, գիտելիքներն ու հմտությունները կատարելագործելու, ավելի լավը լինելու համար:

Սուլյա ԱՎԱԳՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՍՆՆԹԱՑ

Բարի գալուստ, նոր՝ 2022-2023 ուստարի, նոր պարտականություններ եւ նոր խնդիրներ: Կյանքը շարունակվում է անկախ ամեն ինչից, եւ պետք է շարունակենք կրթել, արարել եւ դաստիարակել:

Հաղորդի Մ. Մամվելյանի անվան միջնակարգ դպրոցը սեպտեմբերի 1-ը դիմավորեց Գիտելիքի օրվան նվիրված գեղեցիկ եւ բովանդակալից միջոցառումով: Առաջին եւ երկրորդ դասարանցիներն իրենց արտասանություններով, երգ ու պարով հիացրին ներկաներին՝ ուրախ մեկնարկելով նոր ուսումնական տարին: Գիտելիքի կարևորությունը հատկապես անհրաժեշտություն է անկախ ու ինքնիշխան հայրենիքի սպազան կերտելու հարցում: Սեպտեմբերի 2-ին դպրոցի 10-12-րդ դասարանների աշակերտները մանկավարժական կոլեկտիվի հետ մեկտեղ մասնակցեցին ԱՅ հռչակման օրվան նվիրված երթին: Պահը խորհրդանշական էր, որը կարելի է Չարենցի բառերով բնութագրել՝



մեր միասնությունը մեր հավաքական ուժի մեջ է: Իսկ այդ ուժը պարտավորեցնում է, որ այսօր հարգանքով հիշենք 44-օրյա պատերազմի զոհերին եւ խոնարհվենք նրանց հիշատակի առաջ: Այդ առումով մեր մասնակցությունն ունեցանք Ստեփանակերտում կազմակերպված Խաչերթին:

Ներկա պայմաններում աշակերտների հոգեբանական վիճակը կայուն պահելու, նրանց լսելու եւ նրանց հետ կիսվելու համար կազմակերպում ենք հոգեբանական թրեյնինգներ: Ուշագրավ եւ տպավորիչ էր ԱՅ նախագահի խորհրդական, հոգեբան Լուսինե Ղարախանյանի հետ հանդիպումը, որին ներկա էին IX-XII դասարանների աղջիկներն իրենց դասղեկների հետ:

Հաղորդի դպրոցի ավագ դասարանների աշակերտները մասնակցեցին «Արցախյան ազատամարտ» խորագրով խաղին եւ պարզատրվեցին գրքերով ու պատվոգրերով: Դպրոցի աշակերտները մասնակցեցին հրաձգության, ռազմականացված հնգամարտի մրցումներին: Քանի որ դպրոցը չունի պարապեյու տեղ եւ համապատասխան միջոցներ, չունեցանք էական արդյունքներ: Եվ չնայած սուղ պայմաններին, երեխաները մեծ ոգևորությամբ ու սիրով մասնակցեցին: Այս բոլոր մեծ ու փոքր գործերում իր ուրույն դերն ունի ուսուցիչը: Ուսուցչին մեծարելուն էր նվիրված 11-րդ դասարանի աշակերտների միջոցառումը (դասուղեկ՝ Ն.Դանիելյան), որին իր մասնակցությունն ունեցավ նաև Հաղորդի արվեստի դպրոցը: Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Արեգա Մարտիրոսյանի գլխավորությամբ եւ 5-րդ դասարանի մասնակցությամբ (դասուղեկ՝ Մ. Բաբայան) անակնկալ միջոցառում կազմակերպվեց՝ նվիրված Գրադարանավարի օրվան, որը համեմված էր փոքրիկ բեմակազմում: Նշենք նաև, որ Հաղորդի դպրոցի մի շարք ուսուցիչներ մասնակցեցին վերապատրաստման դասընթացներին եւ ստացել վկայագրեր:

Երբ ապրում ես Արցախում, երբ գիտակցում ես, որ հայրենիքիդ հենասյուններից մեկն էլ դու ես, երբ խորք ցավով գիտակցում ես, որ դեռ կորցրած հայրենիք ունես, չես կարող ուժեղ ու պարտավորված չլինել: Եվ հենց այս ուժն ու պարտավորվածությունն էլ արտահայտվում է մեր գործունեությամբ, գրչի ու գրքի, ռազմա-հայրենասիրական ոգու, մեր համառ պայքարով:

Հաղորդի ապրում է, նրան պետք է փնտրել ամեն հաղորութեցու մեջ:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅՑ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՍԱՐ ԱՊՐԵԼ Է ՊԵՏՔ



ԳԱՌՆԻԿ ԷՂՎԱՐԴԻ ԿՋԻՐՅԱՆՑ: Ծնվել է 1991թ. օգոստոսի 28-ին Ստեփանակերտում: Սովորել է ավարտել է Աշոտ (Բեկոր) Դուլյանի անվան հ. 2 դպրոցը: 2009 թվականից անցել է պարտադիր ծամկետային զինվորական ծառայության Մարտակերտի դիվիզիոնում՝ որպես դիվիզիոնի հրամանատարի վարորդ: Ամուսնացած էր, ունի երկու զավակ՝ Էդվարդ որդին և Էդիտա դուստրը: Գառնիկը լավ որդի էր ծնողների համար, սիրող ամուսին, հոգատար հայր, շրջապատում սիրված և հարգված, ընկերասեր և անշահախնդիր: Իր կյանքի 30 տարիների ընթացքում Գառնիկը մասնակցել է Արցախյան երկու պատերազմների. անցել է և՛ Ապրիլյան, և՛ 44-օրյա անհիժված

անհրաժեշտությունը միշտ կա: Հայրենիքի, հայրենի հողի համար մարտնչելը յուրաքանչյուր հայի պատվի գործն է, ու այդպիսի պատիվ ուներ մեր Գառնիկը: Գառնիկը և նրա մահն հայորդիները սովորեցրին մեզ սիրել հայրենիքը սեփական կյանքից առավել: չէ՞ որ առանց հայրենիք չենք լինի մենք, և առանց մեզ էլ՝ հայրենիքը: Պատերազմը չափացող վերջ է բացել մեր սրտերում, ցավ ու տրտունջ թողել: Մեր լուսնդեն ու ամուշ գավակներն իրենց ծաղիկ հասակը հայրենիքին նվիրաբերեցին և մեր հուշերում մնացին հավերժ երիտասարդ՝ կենսախիճ ու հումորով լեցուն: Դպրոցական սեպտեմբերը ինչպես միշտ, տխուր էր: Բոլորը ափերը սեղմած՝ աղոթում էին նահատակների հոգու հանգստության համար: Ոչ ոք չէր ուզում հավատալ, որ մեր տղերքն այլևս չկան, էլ երբեք չեն վերադառնալու այն տունը, որն ուզում էին շենացնել: Ցավը պատել էր ամենքին: Բայց հայրենիքը դեռ շարունակում է կերտել իր հերոսներին: Ազգն էլ պահեց նրանց անուսները վեհ ու փառավոր:



պատերազմները: Նա իր մարտական խնդիրը կատարել է Ֆիզուլու շրջանի Կարախանբեյլի կոչվող դիրքում: Գառնիկը վիրավորվեց ԱԹՍ-ի բեկորային հարվածից զլխի հատվածում: Իրավիճակն այնքան բարդ էր, որ նրան մի կերպ տեղափոխվեցին Երևանի հանրապետական հիվանդանոց, որտեղ նա 7 օր պայքարել է կյանքի ու մահվան հետ: Լույս դարձավ հոկտեմբերի 6-ին:

Ահա այսպիսին է հայ ազգը՝ միշտ պատրաստ պայքարի ու հաղթանակի: Եվ մենք էլ լինելով մեր երկրի ապագան կերտողը՝ կոչ ենք անում սիրել հայրենիքը, ապրել նրա սահմաններում և ծաղկեցնել այն՝ համուն նրա չխնայելով ոչինչ: Քանզի Նժդեհն ասում է. «Հոգեբանորեն անհայրենիք է նա, ով պատրաստ չէ ամեն վայրկյան մեռնել իր հայրենիքի համար»:

Հիմա ավելի քան երբեք, համախմբվել է պետք, 44 օր ամեն մեկը կռվեց հանուն հայրենիքի, այժմ ժամանակն է ապրել հանուն Արցախի ու Հայաստանի, սովորել, աշխատել, շենացնել երկիրը: Դավաճաններ միշտ եղել են ու կլինեն, բայց մենք երբեք չենք նահանջի՝ կայացրենք միջև վերջ: Կայացրենք ու կապրենք ոչ միայն մեր տեղը, այլև նրանց փոխարեն, ովքեր չապրեցին:

Դժվար է, իրոք, չափազանց դժվար է անկախ ամեն ինչից շարժվել առաջ, բայց տեղում մնալով ոչինչ չի փոխվի, իսկ մենք դեռ անելու շատ գործ ունենք:

Հայրենիքի համար ապրել է պետք... Երջա-

Շնորհավորանք

ՊԱՐՏԱՃԱՆԱԶ, ԱՋՆԻՎ, ԱՌԱՔԻՆԻ



Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենատուգանող առարկան, ամենալավ կենդանի օրինակը. այս ամենն ամբողջանում է ուսուցիչների մեջ:

Վատ ուսուցիչը մատուցում է ճշմարտությունը, իսկ լավ ուսուցիչը օգնում է հայտնաբերել այն:

ԱղոյՖ Դիստերվեզ

Մեծ մանկավարժի այս խորիմաստ տողերը Կարինե Միքայելյան-մանկավարժի աշխատանքային նշանաբանն են դարձել: Նա մեծ պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը մատաղ սերնդի հոգիների թրծման և հայեցի դաստիարակությամբ համակված ապագա քաղաքացու ուսուցման խրթին գործում:

Ծնվել է 1962թ. հոկտեմբերի 3-ին Ստեփանակերտ քաղաքում: Սովորել է Ստեփանակերտի հ. 2 միջնակարգ դպրոցում: Ուսումնառության տարիներին դրսևորել է բարձր առաջադիմություն, հակում ու սեր մանկավարժական աշխատանքի նկատմամբ:

Ստանալով բարձրագույն կրթություն՝ նա աշխատանքի է ընդունվել հարազատ դպրոցում որպես գրադարանավար, այնուհետև՝ որպես դաստիարակ և դասվար: Բոլոր բնագավառներում էլ եղել է կարգապահ, պարտաճանաչ, նպատակասլաց, ազնիվ ու առաքինի:

Նրա սաներն աչքի են ընկել իրենց բանիմացությամբ, բազմակողմանի զարգացածությամբ, պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով:

Այսօր էլ Կ. Միքայելյանն աշխատում է մեծ եռանդով՝ ամբողջովին նվիրվելով մատաղ սերնդի կրթության գործին: Նրան վստահված ցանկացած գործ կատարվում է անբասիր կերպով:

Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ողջ կուլեկտիվը շնորհավորում է սիրելի գործընկերոջը 60-ամյա հորեյանի առթիվ, ցանկանում նրան հաջողություններ, բեղմնավոր գարուններ, խաղաղ Արցախ, ընտանեկան երջանկություն:

Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ



անմահացած տղաների անուսով. «Դժվար է խոսել լույս տղաների հայացքի ներքո ցավ ու մորմոքից և խոսել այն տառապանքից, որ կրեց մեր ժողովուրդը: Բայց ցավից պետք է ծնվի պայքարը, պետք է մտածենք այդ ցավն ու պայքարը դարձնել գաղափար՝ մեր հայրենիքը, մեր չքնաղ երկիրը պահելու գաղափար: Եվ գործ, գործ, միանշանակ՝ գործ»:

Հուշ-ցերեկույթը, որ նաև արիության դաս էր, շարունակվեց Գառնիկ Կզիրյանցի անվան 8-րդ «դ» դասարանում: Աշակերտները ներկայացրին նրա անցած ուղին, վստահեցրին, որ ապրելով կապրեցնեն Արցախը:

Հուզմունքով և հպարտությամբ լեցուն դաս էր, որտեղ խոսք ասացին նաև դասղեկ Նարինե Բաբայանը, Գառնիկ Կզիրյանցի զավակները, պատմության ուսուցչուհի Կարինե Դադայանը, փոխտնօրեն Կարինե Աբրահամյանը: Եզրափակիչ խոսքը դարձյալ տնօրեն Լատրա Մարտիրոսյանին էր, որը նորից ոգեպնդվելու կոչ էր. «Մեր գոհված տղաները պահանջում են արցունքները սրբել և առաջ նայել, գործել համուն հայրենիքի, որ հայի՝ սերունդները մտնեն հայ դպրոց»:

«Լուսարար»

պատիվ հավերժ լեզենդ դարձած մեր հերոսներին: Գառնիկն արժանի էր սովորելու Բեկորի անունը կրող դպրոցում: Ձեզ երբեք բացակա չենք դին: Դուք միշտ ներկա եք: Իմ երկարամյա մանկավարժական գործունեության ընթացքում միշտ աշխատել եմ աշակերտներին հղել հայրենասիրության, ազգասիրության, համախմբվածության մասին գաղափարներ: Պիտի ասեմ, որ մենք չենք պարտվել, հայ զինվորը երբեք չի պարտվում, քանզի մեր հերոս տղաներն այս դաժան պատերազմում այնպիսի սխրանքներ գործեցին, որոնց մասին դեռ երկար պիտի խոսենք ու փառաբանենք: Մեր հերոս տղաները միշտ մեզ հետ են, թեկուզ լուռ՝ մեզ հուշում են, որ հայրենիքը վեր է ամեն ինչից, անզամ Աստծո տված պարզակից՝ կյանքից, և նրա պաշտպանության



նիկ ապրել, ու մենք ապրելու ենք, ապրելու ենք միշտ, ապրելու ենք՝ մեր ներսում վառ պահելով բոլոր անմահացած հերոսների հիշատակը:

Նարինե ԲԱԲԱՅԱՆ Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ուսուցչուհի, 8-րդ «դ» դաս. դասղեկ

ԲԱՐՔԱՆ

ԱՐՑԱԽՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԵ



Լեզվաբան, բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ արխիվից

Ծ

Ես Լևոնիկ: Տրորել, ճգնել: Ես Ես Գեղ: Զրուս շորերը լավ թրջել: Ես Տեղ: 1. Խցկել, ներս կոխել: 2. Ազահորեն ուտել: Ես Կոն: Կկզել: Ես Կոն: Ստիպել, որ ճկոխ: Ես Կոն: 1. Խառնակիչ, խարդախ: 2. Խտրություն դնող: Ես Կոն: 1. Պատռել: 2. Փայել: Ես Կոն: Եղիլ, բղավել: Ես Կոն: Փորոտիք: Ես Կոն: Ընկուզենի: Ես Կոն: Ընկուզ: Ես Կոն: Ձեթի մեջ տապակած չոր հաց: Ես Կոն: 1. Եմել: 2. Տրորել: Ես Կոն: 1. Ձագեր: 2. Փոքր երեխաներ: Ես Կոն: Դժվարությամբ ձեռք բերել, պոկել: Ես Կոն: 1. Չկարված կտոր: 2. Մաս, կտոր, պատառ: Ես Կոն: Պատռել: Ես Կոն: Ջույգ: Ես Կոն: Երկվորյակ: Ես Կոն: 1. Առանձին: 2. Տարբեր: 3. Որակյակ: Ես Կոն: Առանձնացնել: Ես Կոն: Ծայր: Ես Կոն: 1. Թառամել, թռչնել: 2. Թուլանալ: Ես Կոն: Տանիքի հաստ գերանը: Ես Կոն: 1. Թուխս նստել: 2. Խարխուլվել: Ես Կոն: Փորոտիք: Ես Կոն: Կանաչեղենի տեսակ: Ես Կոն: Ծաղիկներով, պտուղներով ծանրաբեռնվել (ծառերը): Ես Կոն: Վերջինը: Ես Կոն: Կանանց պարանոցի զարդ: Ես Կոն: Պատառուտել, փայտը ճղել: Ես Կոն: Երկուսը միասին: Ես Կոն: ՏԵԼԼԱՓԱԿ: Քառատրոփ: Ես Կոն: Փուռ: Ես Կոն: Գողի խոտածածկ գուղձը: Ես Կոն: Կողով: Ես Կոն: ՄԵՏԱԿՅԱԼԱԿ: Միայն մի շապիկ հագած: Ես Կոն: 1. Չորացրած ավելուկի խյուս: 2. Ազված, քանված հյութ: Ես Կոն: ՍԵՆՏՈՐԵԼ: Սկսել նթնել: Ես Կոն: Մի քիչ, փոքր-ինչ: Ես Կոն: Միանգամից: Ես Կոն: Եղածից որևէ մեկը: Ես Կոն: Կոլեկտիվ աշխատանք նրա որևէ անդամի համար: Ես Կոն: Միջրի: Սնդուկ: Ես Կոն: Փայտոջիլ: Ես Կոն: Կծվահամել, դառնահամել: Ես Կոն: ՄԵՆՏ: Մեծանալուց ի վեր: Ես Կոն: ՄԿԼԱԿԵՏ: Մզլահոտ: Ես Կոն: ՄԿԾԵՆԵԼ: Չղջիկ:

Մ

ՄԵՏԱԿՅԱԼԱԿ: Միայն մի շապիկ հագած: Ես Կոն: 1. Չորացրած ավելուկի խյուս: 2. Ազված, քանված հյութ: Ես Կոն: ՍԵՆՏՈՐԵԼ: Սկսել նթնել: Ես Կոն: Մի քիչ, փոքր-ինչ: Ես Կոն: Միանգամից: Ես Կոն: Եղածից որևէ մեկը: Ես Կոն: Կոլեկտիվ աշխատանք նրա որևէ անդամի համար: Ես Կոն: Միջրի: Սնդուկ: Ես Կոն: Փայտոջիլ: Ես Կոն: Կծվահամել, դառնահամել: Ես Կոն: ՄԵՆՏ: Մեծանալուց ի վեր: Ես Կոն: ՄԿԼԱԿԵՏ: Մզլահոտ: Ես Կոն: ՄԿԾԵՆԵԼ: Չղջիկ:

ՄՐԵ: 1. Երկի: 2. Երևույթ: Ես Կոն: ԳՅ: Գիմա, այժմ: Ես Կոն: ԳՅԱՆՑ: Գիմիկվանից, այսուհետև: Ես Կոն: ԳՅԻ: Գիմիկվա: Ես Կոն: ՄԻԱՆԳԱՄԻԳ: Միանգամից: Ես Կոն: ՄԻՏԵՏ: Մի ժամանակ: Ես Կոն: ՄԻԱԿ: 1. Դուռ: 2. Ենթի մուտքը: Ես Կոն: ՄԻՍՈՐ: Ցեց: Ես Կոն: ՄԻՆԱՇՈՇ: Մատնաշունչ: Ես Կոն: ՄՇԿԱԾՈՒ: Բարակ, նուրբ թաղանթով ձու, որ որևէ պատճառով հավը ժամանակից շուտ է ածում: Ես Կոն: ՄՇՈՒՄԵ: Գարշահոտ թունավոր միջատ: Ես Կոն: ՄՈՋԻ: Երկու տարեկան հորթ: Ես Կոն: ՄՈՒՐԱԳՈՒԾ: Մոխրագույն թունավոր օձ: Ես Կոն: ՄՈՒՍՈՇ: Մոշի տեսակ, որ ածում է ծառերի տակ: Ես Կոն: ՄՈՒՍԵԼ: Ծխով, մառախուղով պատվել: Ես Կոն: ՄՈՒՆԳԱԼ: 1. Գոմեշի հանած ձայնը: 2. (փխր.) Թեթևակի ակնարկել: Ես Կոն: ՄՍԱԿԵԼ: 1. Փռել: 2. Թելի ուղորդ բանալ: 3. Ծալված կտորը բանալ: Ես Կոն: ՄՐԱՓԵԼ: Քնել, նիհիլ: Ես Կոն: ՄՐԵՆԴԵՆԵԼ: Կրակից թռչող մոխրագույն նյութեր: Ես Կոն: ՄՐՈՒՐՈՒ: Մաշկային հիվանդության տեսակ: Ես Կոն: ՄՐԻ: Անիծ: Ես Կոն: ՄՐԻՆՈՒՐՈՒ ԱՆԵԼ: Քիթը կախել, դեմքը թթվեցնել: Ես Կոն: ՄՐԻՍԱՆ: 1. Պիղծ: 2. Անագնիվ, խարդախ, նեմգ: 3. Ապականված, կեղտոտ: Ես Կոն:

Յ

ՅՂԾՈՒ: Չվածել: Ես Կոն: ՅՂՆԵԳՅ: Աղավաղ: Ես Կոն: ՅՐՈՒ ՕՆԵԼ: 1. Վերցնել: 2. Ընդունել: 3. Գարնարվել: Ես Կոն: ՅՐՂԱՆ: Գեղեղատ, գառնիթափ: Ես Կոն: ՅՐԿԱՆՑ: Երեկվանից: Ես Կոն: ՅՐԻՄԲՐՈՒՐ: Բռունցք: Ես Կոն:

Ե

ԵԱԼԻ: Անալի: Ես Կոն: ԵԱՆ: Ես: Ես նաև տու մին տեղ լավ կապրիմը: Ես Կոն: ԵՈՒ: Նավթ: Ես Կոն: ԵՈՒԻ: Քաղցած, անոթի: Ես Կոն:

Ը

ԸԱԽԿԱ: 1. Մորթած կենդանու վերից վար ողնաշարով կտրած մսի կեսը: 2. Բույսերի հիվանդություն: Ես Կոն: ԸԱՂԵՆՔՅ: Լորձուք, թուք: Ես Կոն: ԸԱՂԿԵԼ: 1. Շփոթվել: 2. Շշկվել, սխալվել: Ես Կոն: ԸԱՄԲ: Մացառուտ: Ես Կոն: ԸԱՇՏ: Եռանդ, ոգևորություն: Ես Կոն: ԸԲԵՆ: Պաղլեղ: Ես Կոն: ԸԵՊ: Ավելուկի դառնահամ տեսակ: Ես Կոն: ԸԵՈ: Մեզ: Ես Կոն: ԸԻԼ: Շղիկ, ծուռաչք, շեղաչք: Ես Կոն: ԸԻԼԻԻ: Շղիկ, ծուռաչք: Ես Կոն: ԸԼՈՐ: Թթու սալոր: Ես Կոն: ԸՂՈՒՓ: Անկոթ դանակի շեղք: Ես Կոն: ԸՄԱԼ: Ծառի նուրբ ու երկար ճյուղ: Ես Կոն: ԸՈՒԿ: Սուվեր: Ես Կոն: ԸՈՇ: Շիվ: Ես Կոն: ԸՈՒԵԼ: Միզել: Ես Կոն: ԸՐՄՇՈՒՐ: Չանգակածն ծաղիկներով փաթաթվող բույս: Ես Կոն: ԸՐԻ: 1. Օսլա: 2. Թուղթ կպցնելու շաղախ: Ես Կոն: ԸՔԵՆ: Շեք: Ես Կոն: ԸՔՈՒՄԱԶ: Շեքամեջ: Ես Կոն: ԸՔՈՒԵԼ: Ոտները լայն բանալ: Ես Կոն:

Չ

ՉԱՄԱՆ: Աստղածաղիկի սերմ: Ես Կոն: ՉԱՄԵԼ: 1. Չաթել: Գասնել: 2. Իրար կցել,

միացնել, հանգուցել: Ես Կոն: ՉԱՄԵԼ: Իրար միացած մրգեր: Ես Կոն: ՉԱՄՈՒԿ: Պատիչով բրինձ: Ես Կոն: ՉԱՄՈՐ: Այսօրվանից հաշված եկող հինգերորդ օրը: Ես Կոն: ՉԱՄԿՈՒ: Գնացած, անպետք բան: Ես Կոն: ՉԱՄՄՈՒՐ: Խաժաչք: Ես Կոն: ՉԱՄՉԻԳՅ: Փայտե նախշազարդ մեծ գդալ: Ես Կոն: ՉԱՄՉՈՒԼ: 1. Ծանկ, մագիլ: 2. Թաթ: Ես Կոն: ՉԱՐՉՈՒՎԱ: Դռան, լուսամտի, դարպասի շրջանակ: Ես Կոն: ՉԱՓ: 1. Ծուռ, շեղ: 2. Գակառակ, թարս: Ես Կոն: ՉԱՓՈ: Չափ (սովորաբար գործածվում է հագուստի, գլխարկի, կոշիկի վերաբերյալ): Ես Կոն: ՉԵՔՅՈՒԼ: Չորացած ճյուղ, արմատ: Ես Կոն: ՉԸԲՈՒԼ: 1. Ծառի ոստ: 2. Մագերի փունջ: Ես Կոն: ՉԹԱՂՈՒԿ: Դեղձ: Ես Կոն: ՉԹԱՂԿԵ: Դեղձենի: Ես Կոն: ՉՈՒ: Բույսերի և անասունների ծանր հիվանդություն: Ես Կոն: ՉՈՓՉԻ: Գյուղական հեքիմ, որ երեխաների կոկորդում մնացած չոփը որևէ ձևով հանում է: Ես Կոն: ՉՐՄԻՆԵԼ: Չգելով երկարացնել կամ լայնացնել (կաշին, մորթին, գործվածքը, կտորը և այլն): Ես Կոն: ՉՐԻ: Էշը քշելու ծայնարկություն: Ես Կոն: ՉՐԻՐԻԳՅ: Ծառի չորացած ոստ, ճյուղ: Ես Կոն: ՉՓԸՐԾԱԿԵ: Շատ փոքր թռչուն: Ես Կոն:

Պ

ՊԱՇ: 1. Կայծ: 2. Յուղ: Ես Կոն: ՊԱՅՈՒ: Զարմանքի բացակայություն: Ես Կոն: ՊԱՆ: Որոշ ընդդեմների, հատիկների արտաքին պատյանը, պատիճ: Ես Կոն: ՊԱՇՇ: Ափսոսանքի ծայնարկություն: Ես Կոն: ՊԱՊԱՁ (իեգն.) Գլուխ: Ես Կոն: ՊԱՎԱՐՏ: Պարարտ: Ես Կոն: ՊԱՐՈՒՆ: Կեսարայր: Ես Կոն: ՊԱՐՈՎԱՍԵՆ: Վերին շրթնամասը՝ քթի ուղղությամբ: Ես Կոն: ՊԵՁՆԻԳՅ: Կավե ամանի կտոր: Ես Կոն: ՊԵԺԻՆՔՅ: Օժիտ: Ես Կոն: ՊԵԼ: Գիծ, խենթ, խելագար: Ես Կոն: ՊԵԼԻ: Կնքահայր, քավոր: Ես Կոն: ՊԵՄ: Ծառերի գարնանային ընծյուղ: Ես Կոն: ՊԵԿ: Փոս, աղբափոս: Ես Կոն: ՊԵՏՈՒ: 1. Անվայել, անպարկեշտ: 2. Անամոթ, անպատկառ: Ես Կոն: ՊԵՓ: Օրորոցի մեջ դրվող փոքրիկ ներքնակ, որի մեջտեղի անցքում դրվում է լույսը: Ես Կոն: ՊԶԿԱԹԱՆ: Թանի քանվածք, որից չորաթան են պատրաստում: Ես Կոն: ՊԺՆ: Թթու մածուկ, որով կանայք գլուխը լվանում են, մագերը նրբացնում: Ես Կոն: ՊԻՇԻ: Փոքրիկ: Ես Կոն: ՊԻՇՈՒՆ: Փոքրուց, մանկուց: Ես Կոն: ՊԻՆՁ: Բուք գործիք: Ես Կոն: ՊԻՆՁԸՐՓՈՒԿ: Ոսպաչափ փուխր կարկուտ, որ տեղում է գարնան սկզբին և արագ հալչում: Ես Կոն: ՊԼԱՆՈՒԿ: Գծվեցնող բույս: Ես Կոն: ՊԼԿԱՆ: 1. Խլինք: 2. Ծառի դալար ճյուղից հանած գլանաձև կեղև, որի ծայրում խիթ են դնում և օդի ճնշումով պայթեցնում: Ես Կոն: 3. Անմանդամ: Ես Կոն: ՊԼԿԱՆԸ ԵՆՈՒՐ ԸՆԳՆԵԼ: Պատանու սեռական հասունության շրջանը սկսվել: Ես Կոն: ՊԼՈՒՐԳՅ: Երիկամ: Ես Կոն: ՊԼՈՐ: Չանջ: Ես Կոն: ՊԼՈՐ ԱՆԵԼ: Չանջել: Ես Կոն: ՊԵՆԱՆԵ: 1. Բրդի, բամբակի պիտանի մնացորդ: 2. Փոքր, քիչ: Ես Կոն: ՊԸՆԳԸԼ: Գանելուկ: Ես Կոն: ՊՈՐ: Կրակ կտրած փայտ, ածուխ: Ես Կոն: ՊՈՐՆԵԼ: Խայթող մեծ ճանձի տեսակ: Ես Կոն: ՊՈՒՍ: 1. Պռոշը կտրած (աման): Ես Կոն: 2. Կիսատ, թերի: Ես Կոն: ՊՈՒՍԵԼ: Պռատ, թերի դարձնել: Ես Կոն:

ՊՈՒԿԵԼ: Բողբոջել, կոկոնել: Ես Կոն: ՊՈՐՆԵԼ: Տխուր, խեղճ վիճակում հայտնվել: Ես Կոն: ՊՈՐԿ: Բողբոջ, կոկոն: Ես Կոն: ՊՈՐՇ: Շրթունք: Ես Կոն: ՊՈՐՇՏԻ: Պաչ, համբույր: Ես Կոն: ՊՏԵՁՆԸ: Մսի վրա ճանձի ածած ձուն: Ես Կոն: ՊՏԵՁՆԻԼ: Որդնել, նեխվել: Ես Կոն: ՊՏՏՈՐԵԼ: Փաթաթել: Ես Կոն: ՊՏՏՈՐՎԵԼ: Փաթաթվել: Ես Կոն: ՊՏԿԵԼ: 1. Բողբոջել: 2. Պտղաբերել: 3. Ծնվել, սերել: Ես Կոն: ՊՏՂՈՒՆՑ: 1. Բթամատի, ցուցամատի և միջամատի ծայրերի միացումով առնված քանակություն: 2. Ծատ քիչ: Ես Կոն: ՊՏՂԿ: Ծայր, կատար, գագաթ: Ես Կոն: ՊՏՂԵԼ: Փնտրել, որոնել: Ես Կոն: ՊՏՂՈՍԿ: Փնտրտուք: Ես Կոն: ՊՏՂՐՅԱԼ: Պատի մեջ շինված պահարան: Ես Կոն: ՊՏՂՏԿՈՒՆԵՅ: Կակաչ: Ես Կոն: ՊՐԱՆԵԼ: 1. Շրջել: 2. Թափել: 3. Պռակել: Ես Կոն: ՊՐԸՆՅԱՐԵՆՔՅ: Բերանի բորբոքում: Ես Կոն: ՊՐԾԵԼԵԼ: 1. Ազատվել: 2. Վերջանալ, սպառվել: Ես Կոն: ՊՐՊՏԱԼ: Շարժվել: Ես Կոն: ՊՐՏԸՏՈՒՄ: Ներսի կողմը դուրս շրջած: Ես Կոն: ՊՐՏԸՏՈՒՄԻԼ: Ներսի կողմը դուրս դարձնել: Ես Կոն: ՊՐԻՁՏԻ: 1. Սրածայր գլխարկ: 2. Սրածայր ուռուցք: Ես Կոն: ՊՐԻԹԱԿ: 1. Չեքի ժապավենաձև սղոցի ծայրերը պահող և ուղղությունը կանոնավորող մասերը: 2. Երաժշտական լարային գործիքի մաս, որի վրա փաթաթում են լարերի վերին ծայրերը և պատելով լարում են գործիքը: Ես Կոն: ՊՐԻԹԻԼ: Ազահաբար ուտել: Ես Կոն: ՊՐԻԹՆԸ: Բթամատ: Ես Կոն: ՊՐԻԺՈՒԺ: Բժժոժ, շերամ: Ես Կոն: ՊՐԻԼԻԼ: Խմորը գնդել: Ես Կոն: ՊՐԻԼՈՒՐ: Կլոր: Ես Կոն: ՊՐԻՏՈՒՐ: Փոքր: Ես Կոն: ՊՐԻՄԲՈՒՆԵԼ: Խոշոր հատիկներով կարկուտ: Ես Կոն: ՊՐԻՊՈՒՆԱՍԵԼ: Բնքնալ: Ես Կոն: ՊՐԻՊՈՒ: Կանաչ կեղևից հանած ընկույզ, տկողին: Ես Կոն: ՊՐԻՊՈՒՉ ԱՆԵԼ: Պազել: Ես Կոն: ՊՐԻՐՆԵԼ: Բռռ: Ես Կոն: ՊՐԻՐՆՈՒՐՈՒՐ: Վարսակ: Ես Կոն: ՊՐԻՐՏ: 1. Կակաչ: 2. Կաթիլ: 3. Մեղրով կամ դոշաքով շաղախված փոխիմձ: Ես Կոն: ՊՐԻՐՊՈՒՐՈՒՆ: Շատ բրդոտ, մագձորոտ: Ես Կոն: ՊՐԻՔ ԿՅԱԼ: Պոկվել, անջատվել: Ես Կոն: ՊՐԻՔ ՏԱԼ: Պոկել: Ես Կոն:

Ջ

ՋԱԼԿ: Արագ: Ես Կոն: ՋԱԼԻԿ: Գոյակ, սիրելիս: Ես Կոն: ՋԻՎՈՒ: Կիպ, իրար կպած: Ես Կոն: ՋԻԼԵԼ: Պատահել: Ես Կոն: ՋՆԱԳԵՆ: Գիվանդ: Ես Կոն: ՋՋԱԼԻՆԵԼ: Խաղատեսակ: Ես Կոն: ՋՓԱՅԱԿԿ: 1. Նեղության վարձ: 2. Աշխատավարձ: Ես Կոն:

Ռ

ՌԱԿԱԹԿԱ: Եղապարստիկ: Ես Կոն: ՌԵ: Ծանապարհ: Ես Կոն: ՌԵ ԿՅԱԼ: Ուղիղ ճանապարհի գալ: Ես Կոն: ՌԻՆԵՎԵՐ: Որկրամոլ, անկշտում: Ես Կոն: ՌԻԿԱԼԻ: Կափարիչ: Ես Կոն: ՌՈՒՐԳՅ: Աշխատավարձ: Ես Կոն: ՌՈՒԹԱՆԱ: Առավոտյան: Ես Կոն:

ԱՆՍԱԿ ԿԵՐՈՍՆԵՐ

ԱՐԳԱՄԻՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՄՊԵՏ ԴԱՎԻԹ ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Արցախյան 44-օրյա պատերազմի երկրորդ տարեկիցն է: Սարսափելի պատերազմը, ցավոք, մեզ բաժանեց շատ ու շատ մտերիմ ընկերներից, հարազատներից, որոնց բացակայությունը գնալով ավելի շատ է նկատվում: «Լուսարար»-ը անդրադարձավ 44-օրյա պատերազմի ասպետ, անմահ հերոս Դավիթ Յարությունյանի վեհ կերպարին, որը հիացական հիշողություն է թողել ամենուր:

Դավիթ Վլադիմիրի Յարությունյանը ծնվել է 1982 թվականի նոյեմբերի 9-ին Ստեփանակերտ քաղաքում: Մեծացել է զինծառայողի ընտանիքում: 1989-1997 թվականներին սովորել է Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան հ. 3 դպրոցում, իսկ հետո ընդունվել է Թամարա Քանայանի անվան բժշկական քոլեջը և ստացել բուժակի մասնագիտություն:

1990-ականներին Արցախում հիմնադրվեց Յայ սեւ գոտիների ակադեմիայի (Ա.Բ.Բ.Ա.) մասնաճյուղը, որի ներքո լիբանանահայ մարզիչները ուշու-քունգֆու մարտարվեստի պարապմունքներ էին անցկացնում Արցախում՝ համախմբելով հազարավոր պատանիների ու երիտասարդների «Առողջ մարմին, արթուն միտք, ազնիվ հոգի» նշանաբանի տակ և հայրենասիրական գաղափարներ սերմանելով մատաղ սերնդի մեջ: 1997-1998 թվականներին սկսած, իր հասակակից շատ տղաների նման Դավիթն էլ դարձավ առաջիններից մեկը, որն սկսեց հաճախել ուշու-քունգֆուի պարապմունքների: Ներգրավվելով մարտարվեստի աշխարհ ու դառնալով ակադեմիայի նվիրված սաներ՝ Դավիթը եւ իրենց խմբի մարզիկները դեռ չզիտեին, որ տարիներ անց Արցախի ուշուի պատմության մեջ իրենք կճանաչվեն որպես վետերան թիմ՝ առանձնանալով մարտարվեստի ու ակադեմիայի հանդեպ խորը նվիրվածություն ցուցաբերելով, ֆիզիկական եւ մտավոր բարձր մակարդակի սովորելու ունենալով, նաեւ մարզչական հմտություններով կիսվելով ու դրանով մարտարվեստն Արցախում ավելի զարգացնելով ու մասսայականացնելով:

Վինգչուն-քունգֆուի մարզիչ Սայաթ Բաղդասարյանը, որը նույնպես իր մարզական ուղին սկսել է Յայ սեւ գոտիների ակադեմիայի Արցախի մասնաճյուղում մարտարվեստի առաջին քայլերը կատարելով՝ իր մարզական ընկերոջ՝ Դավիթի մասին պատմելիս խորը ափսոսանքով եւ սրտացավորեն է արտահայտվում անդառնալի մեծ կորստի համար: «Դավիթը պարապում էր ավագ խմբում: Երբ

ես սկսեցի հաճախել մարզումների, Դավիթն արդեն շուրջ երկու տարի պարապած մարզիկ էր ու մարզիչի օգնական: Պարտաճանաչ էր, ընդունակ, առանձնանում էր ֆիզիկական եւ հոգեբանական բարձր տվյալներով: Գոտու որակավորման քննությունները միշտ բարեհաջող էր հանձնում: Նրա մեջ վառ արտահայտված էին հայրենասիրական գաղափարները, որով նույնպես առանձնանում էր: Ակտիվ մասնակցում էր ակադեմիայի կազմակերպած բանակումներին»,- պատմում է մարզական ընկերը:

2000-2002թթ. Դավիթ Յարությունյանը ծառայել է Արցախի պաշտպանության բանակում, Մարտունու 2-րդ պաշտպանական շրջանում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը բժշկական քոլեջում, գերազանց ավարտել այն 2005 թվականին: Այդ ընթացքում Յայ սեւ գոտիների ակադեմիայի արցախյան մասնաճյուղը դադարեցրել էր մարզումները՝ Արցախից լիբանանահայ մարզիչների տեղափոխվելու պատճառով: Սպորտի հանդեպ մեծ սեր ունեցող Դավիթն իրեն փոր-

հայրենիքը պաշտպանելու գործով: 2005 թվականին աշխատանքի է անցել Արցախի Ազգային անվտանգության ծառայությունում: Հոգով ու մարմնով գեղեցիկ տղան զարմանալի խելքի եւ ընդունակությունների տեր էր: 2007 թվականին ընդունվել է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի իրավաբանական բաժինը եւ 2012թ. ավարտել է այն կարմիր դիպլոմով: Ինչպես մյուս ուղորտներում էր կարգապահ, այնպես էլ ծառայության ընթացքում էր ցուցաբերում բարձր հատկանիշներ եւ առաջադիմություն: Նա զարմացնում էր բոլորին իր վեհանձնությամբ: Կոչումով մայոր էր, առաքելությամբ՝ մարտիկ: Նա ընտրեց հայրենիքի պաշտպանի մարտական ուղին եւ անցավ այդ ուղին խիզախաբար ու հպարտ:

2020թ. Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմի ժամանակ պետական սահմանի պաշտպանությանը մայոր Յարությունյանը մասնակցել է անձնվիրաբար, եղել թե՛ կետերում, մասնակցել Հադրութի եւ Վարանդայի ուղղություններում մղվող թե՛ մարտերին: Հոկտեմբերի 15-ին Վարանդայի Ղարղաբազար գյուղի տարածքում ծառայակից ընկերների հետ հայտնվել է շրջափակման մեջ եւ արիաբար զոհվել: Մարմնի մասունքները գտնվել են դեկտեմբերի 22-ին նույն վայրում: Նրա ինքնությունը հաստատվել է 2021թ. փետրվարի 24-ին դատաբժշկական քննության արդյունքում: Հուլիսի 1-ին 2021թ. փետրվարի 26-ին Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում: Թշնամու սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում Արցախի



ծում է բռնցքամարտում՝ բավարարվելով սիրողական պարապմունքներով: 2006թ. Սայաթ Բաղդասարյանը համձն է առնում Ուշուի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ պարտականությունները՝ համախմբելով նաեւ նախկին պարապմունքներին եւ որդեգրելով ակադեմիայի սկզբունքներն ու ավանդույթները: Այս անգամ նույնպես Դավիթը առաջիններից էր, որը վերադարձավ մարտարվեստի հարազատ ընտանիք: «Պարապում էր սիրողական, բայց նվիրված օգնում էր բոլորին՝ ինչով կարող էր: Միշտ մասնակցում էր ֆեդերացիայի ժողովներին, անգամ եթե չէր էլ պարապում: Միջոցառումների կամ մրցույթների ժամանակ մրցավարության հարցերով օգնում էր: Փորձառու էր եւ կարողանում էր լավ մրցավար լինել: Ակտիվ էր արշավների ժամանակ, սիրով մասնակցում էր քայլարշավներին: Ընկերասեր էր: Ցանկացած հարցով կարելի էր դիմել նրան, հիմնվել նրա աջակցության վրա: Վստահելի ու պարտաճանաչ մարզիկ ու ընկեր էր Դավիթը»,- ասում է Սայաթ Բաղդասարյանը:

Յարենասիրական մղումները եւ զագին ու հայրենիքին օգտակար լինելու ցանկությունը դրդեցին Դավիթ Յարությունյանին զբաղվել



Հանրապետության պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության եւ խիզախության համար Արցախի նախագահի հրամանագրով մայոր Դավիթ Վլադիմիրի Յարությունյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Լավագույն ընկերոջը կորցնելու դառը ցավով է արտահայտվում նաեւ Դավիթի մտերիմ ընկեր Մարտիկ Յարապետյանը. նրանց մտերմությունը նույնպես սկիզբ է առել ուշու-քունգֆուի մարզադահլիճում համատեղ մարզումներ անելիս: Լինելով հասակակից ընկերներ, հաճախելով նույն մարզածելի պարապմունքներին՝ համախոհ եւ գաղափարակից տղաները նաեւ ընկերության մասին իրենց գաղափարներով էին նման, ինչն էլ հիմք հան-

դիսացավ նրանց միջեւ երկարատեւ ամուր տղամարդկային ընկերության ծեւավորման: Պարտաճանաչ, իրենց մարզածելին նվիրված մարզիկները հասել էին կանաչ գոտու, երբ արդեն սկսեցին մարզչական գործով էլ զբաղվել: Մարտիկ Յարապետյանը մարզումներ էր անցկացնում Ասկերանի մասնաճյուղում: Տարիներ անցան: Մարզումները զուցե եւ փոխարինվեցին կյանքի հոգսերը հոգալով, մինչդեռ տղաների միջեւ իսկական ընկերությունը շարունակվեց՝ չնայելով ոչ մի համաճարմանի:

«Մենք գրեթե միշտ միասին էինք, օգնում էինք իրար, մարզվում էինք միասին, խնդիրների մեջ էինք ընկնում միասին, զվարճանում էինք միասին, կիսվում էինք իրար հետ ամենամտերիմ թեմաներով: Դավիթը երբեք չէր թողնում իր ընկերներին, հավատարիմ էր ու նվիրված: Դավիթն ինձ համար միայն ընկեր չէր, այլեւ հարազատ եղբայր, որի բացակայությունը ոչ ոք չի կարող լրացնել: Երեւի նա միակ մարդն էր, որը կարող էր լինել այդքան բարի, համբերող եւ ունենալ այդքան մաքուր սիրտ: Ուժեղ եւ խիզախ լինելով՝ նա ապշեցնում էր ինտելիգենտությամբ, բարությանբ, սրտի մաքրությամբ եւ հոգու լույսով: Բոլորից առանձնանում էր իր բարեկիրք պահվածքով, միշտ եւ ամենուր պահում էր էթիկայի կանոնները, նրա հետ շփվելը շատ հաճելի էր: Արտակարգ ընդունակություններ ուներ: Օձերից չէր վախենում, սիրում էր բռնել դրանց: Խելացի էր ու բազմակողմանի զարգացած, զբաղվում էր նաեւ մեղվաբուծությամբ: Շատ էր կարողանում, ուսումնասիրում, սիրում էր գիտելիքներ ստանալ: Նրա խրատները դիպուկ էին ցանկացած ոլորտում, անգամ ընտանեկան թեմաներում»,- պատմում է մտերիմ ընկերը:

Դավիթն ամուսնացած էր, ունի երեք զավակ: Կնոջը՝ Ալյոնային, հանդիպել էր բժշկական քոլեջում սովորելու ժամանակ: Ուսանողական տարիներին նրանց միջեւ ծագած ընկերությունն ու սերը հետագայում վերածվել է ամուսնության եւ ընտանեկան երջանիկ կյանքի:

Ընտանիքի ընկեր, երեխաների կնքահայր Մարտիկ Յարապետյանը Դավիթին բնութագրում է որպես իդեալական անձնավորություն. «Կնոջն ու ընտանիքը սիրող, հավատարիմ ու նվիրված ամուսին ու հայր էր Դավիթը: Կնոջ եւ զավակների՝ Ալեքսանդրայի, Վիկտորիայի ու Վլադիմիրի համար շատ դժվար է համակերպվել ընտանիքի գլուխի բացակայության ու կորստի հետ: Փորձում ենք ամել հնարավորը՝ օգնելու մեր հերոս ընկերոջ ընտանիքին»:

Մեր մարտիկների հերոսական փառքում մեծ է Դավիթ Յարությունյանի տեղը: Արիստոկրատ սպա, որի համար մարդկային եւ զինվորական պարտքն ամեն ինչից վեր էր եւ կյանքից թանկ: Օրինակելի մարզիկ, հիանալի ու վստահելի ընկեր, նվիրված մարտիկ, իդեալական ամուսին, որն առանձնանում էր խիզախությամբ, տաղանդով, իր անզուգական թովաքնով: Այդպիսի աստղը չպիտի մարտի, պիտի փայլատակեր: Գուցե հիմա նա տեսնում է մեզ երկնքից եւ ասում է, որ իր կորուստն իզուր չի եղել եւ պատգամում է՝ երբեք գլուխ չխոնարհել ու չնահանջել հարվածի տակ՝ նույնիսկ կյանքի գնով:

ՀՈԳԵՎՈՐ

ՄԵՐ ՍՈՒՐԲ ԹԱՐԳԱՆԻՉ ՎԱՐՂԱՊԵՏՆԵՐԻ՝ ՄԵՍՐՈՊԻ, ԵՂԻՉԵԻ, ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂԻ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ, ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԿԱՅԵՑՈՒ ՏՈՆ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ամեն տարվա հոկտեմբերին շուքով նշում է Սուրբ Թարգմանիչ վարդապետների հիշատակը: Այն շարժական տոն է և այս տարի նշվեց հոկտեմբերի 8-ին:

Սուրբ Թարգմանիչներ են կոչում Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի առաջին աշակերտներին և հետագայի այն սրբակենցաղ հոգևոր գործիչներին, ովքեր փայլել են գրական վաստակով: Նրանք իրենց անմահ գործով, գրերի գյուտով և Աստվածաշունչ Մատյանի թարգմանությամբ հանդիսացան հայ ժողովրդի հոգևոր վերածնության ռահվիրաները: Թեև իրականում այդ մարդիկ շատ-շատ են, սակայն հայոց տոնացույցում հիշատակվում են միայն Մեսրոպ Մաշտոցը, Եղիշեն, Մովսես Քերթոզը (Մովսես Խորենացին), Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին ու Ներսես Կլայեցին, այսինքն՝ Շնորհալիք: Թարգմանիչ ենք կոչում այն պատճառով, որ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևն ու նրանց առաջին աշակերտները հունարենից ու ասորերենից հայերեն թարգմանեցին մեծ թվով երկեր: Սակայն, օրինակ՝ Գրիգոր Նարեկացին և Ներսես Կլայեցին թարգմանիչների շարքը դասվել են պարզապես գրական կարևոր վաստակ թողած լինելու պատճառով:

V դարում հայոց գրերի գյուտից անմիջապես հետո Սբ. Մեսրոպ Մաշտոցը և Սբ. Սահակ Պարթևը հանձն առան Աստվածաշունչ Մատյանի թարգմանության կազմակերպումը: Դա դժվարին, ծավալուն և հույժ պատասխանատու աշխատանք էր, որին լծվեցին մի շարք բանիմաց ու սրբակյաց վարդապետներ, ինչպիսիք էին Եղիշեն, Եզնիկ Կողբացին և ուրիշներ: Նրանց տքնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծվեց Սուրբ Գրքի գրաբարյան սքանչելի թարգմանությունը: Այնուհետև թարգմանիչները ձեռնամուխ եղան Եկեղեցու վարդապետների երկերի թարգմանությանը, որը կարևորագույն նշանակություն ունեցավ Հայ Եկեղեցու և ողջ հայ ժողովրդի համար. ստեղծվեց մայրենի լեզվով ամբողջական հոգևոր գրականություն, որն առ այսօր ապահովում է սերունդների կրթությունը: Թարգմանության շնորհիվ շատերին հասանելի դարձավ հոգևոր խոսքը, և խիստ մեծացավ բարեկիրք ու բարեպաշտ քրիստոնյաների թիվը: Այս պատճառով V դարի Նշանավոր թարգմանիչների լուսավոր հիշատակը տոնվում է Սբ. Գրիգոր Նարեկացու և Սբ. Ներսես Շնորհալու հետ, որոնք նույն գործի մեծ երախտավորներն են:

Գրերի գյուտից հետո ս. Մեսրոպը, ս. Սահակ Պարթևն ու նրանց բազմաթիվ աշակերտներ սկսում են հայ գրերը տարածել ամբողջ Հայաստանով մեկ՝ բացելով նոր հայրենախոս դպրոցներ, նաև եռանդուն կերպով լցվում Եկեղեցու հայրերի գրվածքների հունարենից և ասորերենից թարգմանության գործին: Աստօծ օրհնությամբ և օգնությամբ կարճ ժամանակում ահռելի քանակությամբ գրականություն է թարգմանվում հայերեն՝ չհաշված Աստվածաշունչն ու ծիսական մատյանները: Ուստի մեսրոպյան շրջանը հետագայում իրավամբ ստացել է «Հայոց ոսկեդար» անվանումը:

Անկարագրելիորեն մեծ էր արդյունքը թարգմանական-մշակութային այս շարժումի: Եկեղեցու արարողությունները ստանում են նոր շքեղություն ու փայլ: Ամեն կողմից՝ հրապարակներում, փողոցներում թե տներում մեծերի և փոքրերի շուրթերից լսվում են սաղմոսներ, երգեր ու շարականներ հայերեն լեզվով:

Ղազար Փարպեցին այսպես է նկարագրում այդ տեսարանը. «Պայծառացան եկեղեցիները, սրբերի վկայարանները, ծաղկեց Աստվածաշունչի ուսումը: Թարգմանիչները մշտաբար վտակների ման հորդուն էին իրենց մեկնաբանությունները: Սարգաթեական խորհրդավոր խոսքերը լուսաբանելով՝ մեղրի խորհիսից ավելի քաղցր հոգևոր խորտիկներով լցված սեղաններ էին դնում ամբողջ ժողովրդի առաջ... Հայոց բովանդակ աշխարհը լցվեց Տիրոջ գիտությամբ...»:

Հայերեն լեզվով ստեղծվող ինքնուրույն գրականության մեջ առանձնակի զարգացում է ապրում պատմագրությունը, որի ներկայացուցիչներն են պատմիչներ Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Ագաթանգեղոսը, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Եզնիկ Կողբացին և այլք:

Հպարտությամբ պետք է նշենք, որ առաջին հայկական դպրոցը Մեսրոպ Մաշտոցը հիմնադրել է հենց մեր հայրենիքում՝ Ամարասուում, ասել է թե՛ հայ դպրության տարածումը սկսվել է հենց մեր Սուրբ Հայրենիքից: Հայոց մեջ այնքան սիրելի և ընդունված սրբեր են եղել Թարգմանիչ վարդապետները, որ նրանց հիշատակին նվիրված տոնը վեր է ածվել նաև ազգային տոնի, կառուցել են նրանց նվիրված եկեղեցիներ և վանքեր: Արցախի Մարտունու շրջանի Կաղարծի համայնքի տարածքում է գտնվում այդպիսի սրբավայրերից մեկը՝ Սրբոց Թարգմանչաց եկեղեցին: Շատ խորհրդանշական է, որ եկեղեցին գտնվում է անմիջապես այսօրվա գործող դպրոցի հարևանությամբ, նույն բակում: Տոնի օրն Արցախում նաև համարվում է Կաղարծիի Թարգմանչաց եկեղեցու ուխտի օր:

Համառոտ ներկայացնենք մեր Սուրբ Թարգմանիչ վարդապետների վարքագրությունը:

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ (մոտ 362 - 440)

Ս. Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Կրթություն ստանալով Հայաստանում՝ նա քաջ գիտեր հունարեն, պարսկերեն, ասորերեն, վրացերեն: Մի առ ժամանակ արքունիքի ատենադպիրը լինելուց հետո նա անցավ զինվորական ծառայության, որը թողնելով 394թ.՝ դարձավ վանական: Քարոզելով Հայաստանի տարբեր շրջաններում՝ Մեսրոպը խորապես գիտակցեց իր ժողովրդին սպառնացող վտանգը երկրում տիրող օտար ազդեցությունների հետևանքով և վճռեց ստեղծել հայոց գրերը: Այդ նպատակով Սահակ Պարթև կաթողիկոսի և Վռաձապուհ թագավորի (389-414) աջակցությամբ նա ուղևորվեց Ասորիք: Մեսրոպը բազում ներդրություններից և ապարդյուն ջանքերից հետո, 406թ. աղոթքի պահին տեսիլքով ի վերուստ ստացավ հայերենի հնչյունային համակարգին լիովին համապատասխանող 36 նշանագրերի պատկերները: Վերադառնալով հայրենիք՝ նա անմիջապես հայրապետի հետ ձեռնամուխ եղավ հայ դպրության տարածմանը. բացեց դպրոցներ, եկեղեցական արարողությունները հայացնելու նպատակով սկսեց Սուրբ Գրքի և ծիսական գրականության թարգմանությունը:

Ս. Մեսրոպը իր աշակերտ Կորյունի վկայությամբ գրել է նաև ճառեր: Նրան են վերագրվում առ այսօր Հայոց եկեղեցում գործածվող ապաշխարության շարականները: Սբ. Մեսրոպը հայոց կաթողիկոսի հետ պայքարել է նաև նեստորականության և բորբորիտոնների աղանդների դեմ: Սբ. Սահակի մահվանից հետո ապրում է միայն վեց ամիս, որոնց շրջանում ինքն է հովվում Հայոց եկեղեցին: Իր աստվածասեր հոգին Տիրոջ ձեռքն

է ավանդում 438թ. փետրվարի 17-ին Վաղարշապատում: Վահան Ամատունի իշխանը նրա մարմինը թաղելու համար տրամադրում է Օշականի իր տոհմական կալվածքը, և սրբի մարմինը Վաղարշապատից թափորով ու մեծ հանդիսությամբ տարվում է Օշական: Ասվում է, որ նրա մահվան ժամանակ նրա մարմնի վերևում լուսավառ խաչ է հայտնվում, որն ուղեկցում է նրան ամբողջ ճանապարհին մինչև թաղման վայրը: Ս. Մեսրոպ Մաշտոցն այն հայ սրբերից է, ում գերեզմանն անխաթար հասել է մինչև մեր օրերը և շարունակում է մնալ սրբազան ուխտավայր հայ ժողովրդի համար:

Ս. ԵՂԻՉԵ ՎԱՐՂԱՊԵՏ (մոտ 410 - մոտ 470)

Հայ մեծ պատմիչը և վարդապետը ավանդության համաձայն Սբ. Սահակ Պարթևի և Սբ. Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտներից էր: 434-441 թթ. նա ուսանել է Ալեքսանդրիայում: Հայրենիք վերադառնալով՝ ծառայության է անցել Սբ. Վարդան Մամիկոնյանի մոտ որպես զորական և դպրապետ: 450-451 թթ. մասնակցել է Վարդանանց պատերազմին, որից հետո թողել է զինվորությունը, հեռացել աշխարհից և դարձել մենակյաց: Սբ. Եղիշեն թողել է իր ճգնության տարիներին գրած «Վարդանի և հայոց պատերազմի մասին» աշխատությունը, որը մեծ արժեք ունի իբրև կարևորագույն պատմագիտական սկզբնաղբյուր, ինչպես նաև՝ բազմաթիվ դավանաբանական և մեկնողական երկեր, որոնցից նշանավոր է «Արարածոց մեկնությունը»:

Ս. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱԿԻ (մոտ 410 - V դ. վերջ)

Հայ մեծ պատմիչ Ս. Մովսես Խորենացին, որին հետագա դարերում իրավամբ կոչել են Պատմահայր և Քերթողահայր, աշակերտել է Ս. Մեսրոպ Մաշտոցին և Ս. Սահակ Պարթևին, իսկ 434-435 թթ. մեկնել է Ալեքսանդրիա՝ ուսումը շարունակելու: Ժամանակի հունական մշակույթի այս կարևոր կենտրոնում Մովսեսը հմտացել է քերթողական արվեստի, ճարտասանության և քերականության մեջ, նաև՝ կատարելագործել հունարենի իր գիտելիքները: Հայրենիք վերադառնալով իր ուսուցիչների մահից հետո (մոտ 440թ.)՝ նա զբաղվել է թարգմանչությամբ, ինչպես նաև գրել է ինքնուրույն երկեր: Խորենացու գրչին են պատկանում եկեղեցական տոներին նվիրված բազմաթիվ շարականներ: Արդեն պատկառելի տարիքում նա Սահակ Բագրատունու խնդրանքով սկսել է գրել «Հայոց պատմություն» աշխատությունը, որը, լինելով հայ միջնադարյան մատենագրական հանձնարի բարձրագույն դրսևորում, մեր ժողովրդի հին պատմության կարևոր և համապարփակ աղբյուրն է:

Ս. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ (V-VI դդ.)

Հայ մեծ իմաստասեր Ս. Դավիթ Անհաղթը Ս. Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից էր՝ Սուրբ Գրքի թարգմանիչների վերջին դասից: Նրա մեծարժեք գրական ժառանգությունը, հատկապես «Սահմանք իմաստասիրության» երկը որոշիչ դեր է ունեցել հայ միջնադարյան փիլիսոփայական գիտության կազմավորման գործում՝ շուրջ մեկ հազարամյակ լինելով բազմաթիվ մեկնողական աշխատությունների առարկա: Ըստ ավանդության՝ Ս. Դավիթ Անհաղթը ստեղծել է նաև բազմաթիվ եկեղեցական երգեր:

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ (951-1003)

Հայ եկեղեցու մեծագույն սրբերից մեկի՝ Գրիգոր Նարեկացու մասին փոքրաթիվ, սակայն հավաստի տեղեկություններ են պահպանվել: Նա Խոսրով Անձևացու որդին է: Կրթությունը ստացել է իր ժամանակի հռչակված Նարեկավանքի դպրոցում: Հետագայում Գրիգորը դարձավ այդ վանքի սյուներից մեկը: Մեզ են հասել նրա անվան հետ կապված մի քանի ավանդություններ, որոնք վկայում են Նարեկացու շնորհների և սրբակեցության մասին: Չուր չէ, որ տակավին կենդանության օրոք նրան կոչում էին հրեշտակ մարմնի մեջ: Ս. Գրիգորը գրել է ներբողներ, գանձեր ու տաղեր, երգ երգոցի մեկնությունը, նոր շունչ և կյանք է հաղորդել հայ միջնադարյան երգարվեստին: Սակայն նրա գլուխգործոցը հռչակավոր «Մատյան ողբերգության» պոեմն է՝ «Նարեկը», որը սիրելի աղոթամատյան է յուրաքանչյուր հայ հավատացյալի համար:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ (1102-1173)

Ս. Ներսեսը՝ Պահլավունիների տոհմի շահաժողը, 1166թ. ձեռնադրվել է հայոց կաթողիկոս՝ հաջորդելով իր եղբորը՝ Գրիգոր III Վկայասերին, որի օգնականը և խորհրդատու էր դրանից առաջ: Կյանքի վերջին շրջանում հայրապետն ապրել է Հռոմկլա բերդաքաղաքում, որի անունով էլ նրան կոչել են Կլայեցի: Ս. Ներսեսը, որն իրավամբ կրում է Շնորհալի մականունը, մեզ է ավանդել բազմաթիվ երկեր թե՛ արձակ (մեկնություններ, թղթեր, ճառեր) և թե՛ չափածո (շարականներ, տաղեր, գանձեր, ներբողներ): Նրա անվան հետ է կապվում հանելուկի՝ իբրև գրական առանձին տեսակի ստեղծումը: Սուրբ հայրապետը նաև հմուտ երգահան էր՝ հայ երաժշտության կիլիկյան դպրոցի ամենափայլուն ներկայացուցիչը:

Թարգմանչաց տոնի շարական

Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի՝ հովուել զհօտ նոր Իսրայելի: Երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի, հաստատեցին զաթոռ սրբոյն Գրիգորի՝ թարգմանութեամբ նշանագրութեան: Երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին, նկարագրեցաւ մեզ գիր կենդանի՝ յարգանք մաքուր մեծին Մեսրոպայ: Անմատոյց լուսոյն երկրպագեսցուք:

Խնդրենք, որ Սուրբ Թարգմանիչ վարդապետների բարեխոսությամբ բարձրյալն Աստված մեր ազգը պահի և պահպանի իր ամենագոր Աջի հովանու ներքո, մեր հոգևոր հայրերին և պետական այրերին շնորհի Թարգմանիչ վարդապետների իմաստությունը, որ կարողանան այս ամորոշ և ազգի գոյությանը սպառնացող վտանգներով լի ժամանակաշրջանում ճիշտ առաջնորդել ժողովրդին դեպի անվտանգ, ապահով և բարօր ապագա:

Սուրբ Թարգմանիչ վարդապետների բարեխոսությունն ու Տիրոջ օրհնությունը բոլորիս:

Արթուր կարև ԱՔՐԱՅԱՍՅԱՆ Արցախի թեմի ՔԴՔԿ փոխպետ

ԳՐԱԿԱՆ

ԾԱՌԸ



Ես ծնվեցի քարերի մեջ: Իսկ ինչո՞ւ հենց ես ծնվեցի քարերի մեջ, չգիտեմ, ասում են՝ ճատագազիր է... Իսկ ո՞վ է ճատագիր գրողը, ո՞վ որոշեց իմ ճակատագիրը՝ չգիտեմ... Բայց այն, որ ծնվեցի քարերի մեջ, հաստատ է... Ու երբ քարերի միջից դուրս եկա, շատ տանջալի եր ու նաև ցավոտ՝ կողերս փշրելով լույս աշխարհ ելա... Շուրջս ամայի էր... Մինչև թևերս վեր հանած մեկնվեցի վերև՝ քրտինքս կաթկթում էր, չորացել էր լեզուս... սպանում էր ինձ ծարավը, ու այն կաթ ջուրը, որ ես առաջին անգամ ընպեցի, իմ դառն ու աղի քրտնիքի կաթիլն էր, որը նաև, հետո հասկացա՝ ճակատագրից ինձ տրված դառն կյանքի առաջին դառն ունակն էր... Ընկճվեցի, կծկվեցի, մի քիչ դալկացա, նվաղեցի, մի քիչ վախեցա, վիատվեցի... Ես մեռալիս էի, քարերի մեջ, քարերի արանքում... Քարերն էլ քարեր էին՝ քարի նման քար կտրած... քարերի պես անտարբեր... քարերի պես անզգա... Երեկոյան մի քիչ լացեցի, տեսա լսող չկա, ավելի բարձր լացեցի, տեսա լսող չկա՝ ճչացի, գոռացի, տեսա լսող չկա՝ հանդարտ ձենս կտրեցի ու քնով անցա: Առավոտ վաղ ոտքերս ընկնված էին ջրերի մեջ. երեկոյան անձրև էր եկել: Մի կերպ ոտքերս թափահարեցի ջրի մեջ, վիզս մեկնեցի վեր և մի քանի սանտիմետր էլ բոյ քաշեցի... Քարերն ինձ սեղմեցին: Երբ շնչացի կամաց՝ ջարդեցիք կողս, նրանք քարի նման անտարբեր եղան, ու ես հասկացա, որ ավելորդ է իմ տրտնջոցը. ինձ լսող չկա..., ու ես անհուսությունից, անգորությունից քրքրված, ինձ մի լավ թափ տվի ու էլի վեր բարձրացա՝ վեր, վեր վեր... ճակատագիր էր, պիտի տարիներ տևեր, ու ես պիտի հետո, ավելի ուշ արդեն հասկանայի, որ իմ ճակատին մաքառում էր գրված... ճակատագիր էր... Քարերի ճակատագիրն էլ քարի կտոր լինելն էր իմ հարևանությամբ, իմ շուրջը բոլորած... Բնությունն էլ չպիտի զլանար կարկուտ թափել վրաս... բնությունն էլ չպիտի զլանար ինձ հողմածածկ անել, բնությունն էլ չպիտի զլանար տապով ինձ խանձել, բնությունն էլ չպիտի զլանար ջրիտեղ անել ու ջրերի մեջ փորձեր ինձ խեղդել, ու ես ճակատիս գրած մաքառումով պիտի մաքառեի... Եղավ պահ, որ ուզեցի մեռնել, ուզեցի վերանալ, ուզեցի էլ չլինել, բայց և այնպես ապրեցի, հզորացա, այ, այսպիսի մեծ ծառ դարձա... Այնքան մեծացա, որ արդեն տեսնում էի անդունդի եզրին եմ կանգնած, ու ինձ անդունդի եզրից չզլորվելու համար պարտական եմ միմիայն այդ լուռ, անսիրտ, անհոգի քարերին... Ու հասկացա նաև, որ իմ քարե անկտրում կամքի համար պարտավոր եմ այն քարեղեն երկրին, որտեղ ես եմ ծնվել...

վել... Ու ես իմ բարձրությունից տեսա ներքևում ավելի մեծ ու հզոր ծառեր, որոնք չնայած բարեբեր հողի մեջ են աճել, բայց և այնպես չեն կարողանում հողմերին դիմակայել ու տապալվում են շառաչով՝ աչքները ինձ հառած ու զարմացած, որ ես անդունդի ծերպին, ժայռի եզրին դեռ կանգուն եմ... Իմ հյուրերը հզոր արժիվները եղան: Նրանք իմ շվաքում բույն հյուսեցին: Որսորդից փախչող քարայծերի վերջին կանգամն էլ էր ինձ մոտ... Ազատ ապրել տենչացողների երազանքն էի... Ես մեռալիս էի: Բայց հենց իմ մեռակությանը էի ես հզոր... Դեպ ինձ էին ձգվում սիրահարները... Սիրո երդումը իրար իմ շվաքի տակ էին շնչում՝ ասելով, որ իրենց սերը, տա՛ Սատված, այնքան ամուր ու դիմացկուն լինի, ինչպես այս ծառը, այսինքն՝ ես: Չետո գունավոր թելեր էին կապում ստեղծերիս՝ որպես իրենց նշանի ուխտի մատանի... համբուրում էին ինձ, արցունքներով ողողում դեմքս... Ու... ու ես հասկացա նաև, որ պիտի ապրեմ, երկար ապրեմ, որպեսզի հավերժացնեմ, ապրեցնեմ ինձնով նրանց հավատն ու հույսը... Ինձ մարդիկ անվանեցին սուրբ ծառ: Չգիտեմ ինչու՝ սուրբ, ինչո՞ւ հենց ինձ... Բայց դե ճակատագիր էր, ու իմ այցելուների թիվն ավելանում էր ու ավելանում... Ներքևից ինձ էին նայում անցորդները, մի պահ կանգնում զարմացած, ապշած ու մրմնջում՝ այս ծառը այս ամայի, քարքարոտ վայրում որ դիմանում է, որ ապրում է, ուրեմն կարելի է չհուսահատվել... Ու ինձ անվանեցին նաև հրաշք ծառ, հույսի ծառ... ճակատագիր էր... Ու ես հասկացա, իմ ճակատագիրն էր՝ հոգու լույս հանդիսանալ բեկվածների համար, հուսալքվածների համար, վիատվածների համար... Ու ես իմաստնացա, իմաստնացա այնքան, որ այլևս ինձ չհամարեցի դառն ճակատագրով, դառն ճակատագրի արժանացած... որովհետև ես կյանքի աղբյուր էի, խորհրդանիշն էի դիմակայության ու սիրո... Ու ես շնորհակալ եղա իմ դառն ճակատագիր գրողին... Ու ես շնորհակալ եղա այն քարքարոտ երկրին, որտեղ ծնվեցի, այն քարքարոտ երկրին, որը ինձ սնեց, հզորացրեց, վեր, միշտ դեպի վեր բարձրանալու գաղտնիքի բանալին նվիրեց, մեջս վեհության ոգին սնուցեց:

ՄԱՐՍԸ

Կովը նայեց մեծացած ցուլիկին, և անսահման տխրություն իջավ վրան: Լուսաբացին, երբ դեռ նոր էին արևի ճառագայթները ներս խցկվել ճաղապատ պատուհանից, դուռը բացվեց, կովին դուրս կանչեցին: Կովը զգաց, որ ցուլիկի նայվածքը կախվել է իր մարմնից, և ինքը գորություն չունեցավ դուրս գալու... Դրսից էլի կանչեցին: Վաղուց արդեն այդպես կանչում են ամեն առավոտ ու տանում արոտի: Դրսում լինելն, իհարկե, լավ էր: Սակայն այսօր չէր ուզում, սիրտը համառորեն չէր պոկվում գոմից: Տերը ներս մտավ, քրթմնջալով հրեց մեջքին: Կովը չկանգնեց գոմի թողեց և մի քանի քայլ չարած՝ ցնցվեց ցուլիկի բառաչից... Ի՞նչ էլե՞ք կար այդ բառաչում, որ այնպես ծակեց իր սիրտն ու կտորկտոր արեց այն... Չետ նայեց, տեսավ ցուլիկին՝ գլուխը մեկնած դառն արանքից... Ետ գոմ մղվեց կովը: Տերը գոռաց: Ճիպտով խփեց ցուլիկի դնչին: Դուռը փակվեց: Կանչեց-բառաչեց, կանչեց ցուլիկը...

...Չանդ տանող ճանապարհին կովն առաջվանը չէր. տարօրինակ ինչ-որ բան էր կատարվում ներսում: Իրեն հետամտող ցուլին այնպես նայեց, որ սա ընկրկեց ու լուծվելով նախիրին՝ այլևս չձանձրացրեց: Կես ճամփին իր ցուլիկի հասակակից երինջը մոտեցավ իրեն. կարծես բան էր հարցնելու ու զլուխը կախեց ամաչկոտ: Մի առժամանակ այդպես քայլեցին լուռ, հետո ինքը չդիմացավ, զլուխը շրջեց, լիզեց երինջի աստղանշան սիրուն ճակատը... Մեղանալով... Կանգ առավ. ճնշվում էր հոգին... Կանգ առավ և երինջը... Ծանր, հանդիսավոր սզո թափորի պես, ոտքերը՝ փոշու մեջ կորած, իրենց կողքով նախիրը անցավ... Տավարածի ճիպտոր դաջվեց կովի մեջքին, երինջն էլ իր հերթին կծկվեց: Առաջ շարժվեցին... Չասան արոտավայր՝ կովերն արածում էին: Ինքն այս ու այն խոտից մի քանի պատառ պոկուցեց-ծամծմեց: Ցուլիկի սիրած ծաղկահոտի համն առավ: Ծնուտը սառեց: Տավարածը կանգնել էր մոտը, աչք չէր կտրում իրենից: Ինքն ուզում էր ետ գոմ գնալ... Կուշտ արածած կովերը կեսօրվա տապից թաքնվեցին արոտատեղում գտնվող միակ կիսավեր շենքի ներսում ու պատերի տակ: Կովի ծնկները դողում-ծալվում էին, քայլել չէր կարողանում: Տավարածը շոյեց իրեն, տնտղեց-շոշափեց մրմնջալով. - Չը, քեզ ի՞նչ պատահեց... Մի բան չպատահի՞, երեխատեր եմ, ծախսի տակ չընկնեմ... Ինքը տունդարձի ծամփան համարյա վազելով անցավ... Բանի անգամ տավարածը առաջը կտրեց. - Խելա՞ռ, խելա՞ռ, այդ ո՞ր ես շտապում... Բաց էր դարպասը: Գոմի դուռն էլ էր բաց: Պիտի գոմ մտնեք, չնտալ: Տագնապած ու ահով շուրջը նայեց... Ծնկները դեռ դողում էին: Ցուլիկի բույրը օդում կար, ինքը չէր երևում: Օրորվող քայլերն իրեն տարան բակի այն անկյունը, որտեղ ասես ինչ-որ բան կա թափված... Գլուխն իջեցրեց, լիզեց գետնի հողախառն կարմիրն ու հուսակտուր բառաչը օդը պատառտեց... Տնից սարսափահար մարդիկ դուրս թռան... Ինչ-որ մեկը փարվեց կովին, ինչ-որ մեկը շնչացրեց. - Մարա՛լ, Մարա՛լ, Մարա՛լ... Կովի տխուր, խոշոր աչքերը շարված էին ու ասես պիտի դուրս պրծնեին ակնախոռոչներից... Բացված շրթերի արանքից, դանդաղ, բացված սրտի պայթած երակի ծորանն էր քամվում... Նա ասես վերջին ուժերը հավաքեց, գլուխը ցնցեց, ճիգ գործադրեց սթափվել... Աչքի առաջ գծագրվեց ցուլիկի դնչիկն ու վրան շիտկոցով փակվող գոմի դուռը... Ականջներում խշշաց ցուլիկի բառաչն ու տեսավ իրեն, իր մարմնին փարվող նրա հայացքը... Ընդերքը կտրատող ամենից ցավը չոքեցրեց կովին, ու նա այլևս անկարող շարժվել՝ մթազնող հայացքով նայեց պլշած աղերսով իրեն նայող տիրոջն ու օդում թողեց մի անզոր ու խեղճացված հարց. - Ախր ինչո՞ւ, ո՞վ բարի մարդիկ, ախր ինչո՞ւ... **Լուրսա ՅՈՒՍԵՓՅԱՆ**
Շուշիի մշակույթի և երաժշտական կենտրոնի տնօրեն

ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՐԴԻԿ

ԱՐԹՈՒՐ ԶԻԼԻՍԳԱՐՈՎ



Մեր ժամանակների ամենահայտնի հայ գիտնականներից է աշխարհագրական գիտությունների դոկտոր, օվկիանոսագետ, Արկտիկայի և Անտարկտիկայի ակադեմիկոս և անվախ հետազոտող Արթուր Զիլինգարովը: Մինչև 2007 թվականին իր փորձերի և հետազոտության արդյունքները ներկայացրել է «Սիբիր» ատոմային սառցահատի գիտարշավը Գյուսիսային բևեռում: Արթուր Զիլինգարովն ընդգրկված է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես միակ բևեռախույզը, որ 6 ամսվա ընթացքում եղել է Երկրի երկու բևեռներում: Եղել է ՌԴ Պետդումայի հինգ գումարումների պատգամավոր, Պետդումայի փոխնախագահ:

ՎԻԿՏՈՐ ԶԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ



Աշխարհում լայն ճանաչում ունի հայ ակադեմիկոս աստղաֆիզիկոս, աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Զամբարձումյանը, որը Գալիլեոյի հայտնի աստղադիտարանի ստեղծողն է, աստղագետ և աստղաֆիզիկոս, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկը:

Զամբարձումյանի աշխատությունները վերաբերում են աստղերի և միգամածությունների ֆիզիկային, արտագալակտիկական աստղագիտությանը, աստղային համակարգերի դինամիկային, աստղերի և գալակտիկաների տիեզերածնությանը և մաթեմատիկական ֆիզիկային, միջուկային ֆիզիկայի բնագավառներին: Սկզբունքորեն նոր տիեզերածնական հայեցակարգի հեղինակ է: ԽՍՀՄ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, Գալիլեոյի ազգային հերոս, Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի դափնեկիր:

ՏՈՐԶ ՍԱԳՅԱՆ (ՍԱՅԱԿՅԱՆ)



Գայերի մեջ Նոբելյան առաջին դափնեկիրը 2007 թվականին դարձավ օթերևութաբան (կլիմայագետ) Դորգ Սահակյանը (Սահակյան), որն աշխատում է Ամերիկայում: Բնապահպանական նախաձեռնության տնօրեն (գնահատում է տեխնոգեն գործունեների պատճառով կլիմայի գլոբալ փոփոխությունների ռիսկերը), Գարվարդի համալսարանի պատվավոր պրոֆեսոր (2004): Ստեղծել, մշակել է անցյալում երկրի օդային ճնշումը հաշվարկելու տեխնիկան՝ հիմնված սառեցված հրաբխային լավայի պոպուլյացիայի չափի տարբերության վրա: Տորո Սահակյանը նպաստել է կլիմայի փոփոխություններով զբաղվող փորձագետների միջկառավարական խմբի գնահատման չորս գեկույցներից երեքին, որի համար 2007 թվականի հոկտեմբերի 12-ին ԱՄՆ նախկին փոխնախագահ Ալբերտ Գորիի հետ համատեղ արժանացել է Խաղաղության Նոբելյան մրցանակի:

Ռ. ԱՆԱԶԵԼՅԱՆ
Մ.գ.թ, ԱՐԴՂ ֆիզմաթ
ամբիոնի պրոֆեսոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ԻՄՐԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ
Մտեփանակերտ,
Յ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Մտեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 17.10.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: